Կոստանդինյան Կ.

Հայկոնի կարգերի

ուսումնասիրություն հայոց

9(7)
Կ-75

8 47
735d.
9(47.925)
Ц-34
Գ-բ
1263

ՅԱԿՈՎԲ ԿԱՐՆԵՑԻ

ՏԵՂԱԳԻՐ ՎԵՐԻՆ ՀԱՅՈՑ

Ցիւռտակարան Ժ-Էջ. դարու.

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Востоковед. АН Арм. ССР

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.
1903

Մ. գրադարան

Գործիս հեղինակը՝ տէր Գէորգի որդի տէր Յակոբը ընիկ Կարնեցի՝ Արզրում քաղաքի Հայոց Միաբան Ս. Աստուածածին եկեղեցու 15 քահանաներից մէկն է. ապրել է ԺԷ. դարում և նկարագրել է դէպքերը, որոնց ժամանակն ընկնում է 1622—1662 թուերի մէջ. թէև նորա գործը Բարձր Հայքի տեղագրութիւնն է, բայց Արզրումի մէջ պատահած նշանաւոր անցքերի նկարագրութիւնն էլ չի մոռանում։

Նա յիշում է Օսմանցւոց և Պարսից պատերազմների մասին, որոնք տեղի ունեցան 1586 թից մինչև 1640 թուականը. նորան զբաղեցնում են և այնպիսի իրողութիւնները, որոնք Արզրումի Հայոց կեանքի մէջ նշանակութիւն ունին. առաջին տեղը զբաւում է եկեղեցիների խնդիրը. նա պատմում է, որ 1629 թուին Արզրում եկաւ Հալասցի Սանոս Չէլէպին, որ արքունի մաքսապետ էր, ինքը շատ հարուստ և բարեպաշտ մարդ. երկու տէրութիւնների պատերազմի ժամանակ նա իւր կարողութեամբ մինչև հազար գերի ազատեց։ Թէև Արզրումու բերդի մէջ Հայոց շատ եկեղեցիներ են եղել, բայց բոլորն

էլ անցել էին տաճիկների ձեռքը, «զոր արարեալ են ամբարանոցք և զոր քակեալ և քայքայեալ են,» նոցանից մէկն էր և մի սաղաչէն գեղեցիկ եկեղեցի, որը մի տաճկի «տուն և սարայը էր.» Սանոս Չէլէպին այդ տունը գնեց և 1637 թուին վերականգնեց եկեղեցին, առջևի մասը քանդելով և տեղը մի փայտեայ ժամատուն կառուցանելով. քահանաներն և ժողովուրդը սիրով միաբանեցան և օգնեցին գործին. «բազում դրամս մսխեցին ի դրունս վաչաներացն.» եկեղեցին էր յանուն Ս. Սահմանոսի. նորա մէջ ժամերգութիւնը չարունակուեցաւ մինչև 1662 թուականն, երբ Կ. Պոլսից առանձին հալածանք եկաւ քրիստոնեաների դէմ։

Տէր Յակոբը պատմում է, որ 1651 թուին Արզրում եկաւ Վանեցի մի մոլլայ Վանի անունով, որը մի ժամանակ այնտեղ մնալուց յետոյ գնաց Կ. Պոլիս. մոլեռանդ կրօնաւորի մեծ համբաւ ունենալով, Վանին այնտեղ մեծ ազդեցութիւն ձեռք բերեց Բարձր Դրան վերայ. նորա թելադրութեամբ 1662 թուին հրաման եկաւ, որ Կ. Պոլսոյ մէջ «մինչև տասն եկեղեցի Հոռոմոց և Հայոց քանդեալ աւերեցին, և ի դրուխս ամենայն քրիստոնէից՝ Սամբաթայ մինչև ի Թոխաթ և ի Սեբաստիոյ վիճակն՝ սև գոտակ հագուցին և գլխակեղն եասաւլ արարին։»

Նոյն այդ մոլլայի ազդեցութեամբ հրաման եկաւ Արզրում, որ բերդի Ս. Սահմանոսի եկեղեցին տան

և մզկիթ արին։ Այնուհետև Արզրումի Հայոց ձեռքը, որոնք այն ժամանակ մօտ երկուհազար տուն էին, մինացմիայն մի եկեղեցի բերդի պարսպից դուրս, այն է Միաբան Ս. Աստուածածին եկեղեցին. որի մէջ 1653 թուին կար 15 քահանայ և 10 սարկաւագ։ Յառաջ, երբ եկեղեցիների թիւն երկուս էր, քահանաների թիւն էր 30. թէ երբ և ինչպէս եղաւ, որ նոցա թիւը կիսով չափ պակսեցաւ, տէր Յակոբը չի բացատրում։

Արզրումի Հայոց վիճակին է վերաբերում տէր Յակոբի նկարագրութիւնը, թէ ինչպէս 1653 թուին գողերը կողոպտել են Միաբան Ս. Աստուածածնի զարդերն ու անօթները, ինչ իրարանցում եղել է ծերունի տէր Գէորգ աւագ քահանայի, բոլոր եկեղեցական ուխտի և ժողովրդի մէջ, և թէ ինչպէս Աստուած օգնել է, որ վաչան գողերին բռնել է տուել և գողօնը գտնելուց յետոյ նոցա բոլորին խիստ պատժել է բազմութեան առաջ։

Արզրումի գաւառի պատմական դէպքերից տէր Յակոբը չատ քիչ բան է հանդէս բերում. մի անգամ միայն, երբ իւր սրտի ուրախութիւնն է յայտնում, որ Հայերը, չնայելով ծանր ճնշումներին, իրենց հաւատն հաստատ են պահում, նկարագրում է գաւառի ժողովրդի ընդհանուր վիճակը։ Նա ասում է, որ 1643 թուին Կ. Պոլսից ուղարկուեցաւ Արզրում Ջաֆար անունով «ժանտարարոյ

և քրիստոնէից խասիլ» մի մոլայ, որին յանձնուեցաւ Արզրումի բոլոր շրջակայ եկեղեցիներն աշխարհագիր անել։ Զաքարն՝ «արար դաւտար և կապեաց ծանր խարան, և ելից մեծ և փոքր ի թագաւորական դաւտարն.» այդ պատուհասից ազատուելու համար Թորթումի կողմերի Վրացիք, ասում է տէր Յակոբ, «յերկուցեալք ի յահէ խարանին, դարձան յօրէնս Մահմէտի։» Թէև՝ կրօնափոխութեան երևոյթներն Օսմանեան տէրութեան մէջ կրկնուել են շատ անգամ և ոչ միայն Վրացի, այլև միւս քրիստոնեայ ժողովրդի մէջ, սակայն տէր Յակոբի պատմութեան մէջ նորը այն է, որ կրօնափոխութիւնը զգալի թեթևութիւն է պատճառում հարկերին կամ նոյն իսկ ազատում է խարանից։

Տէր Յակոբի տեղագրութեան շատ մասերը գեղեցիկ պատկերացնում են զանազան կենցաղական պայմանները թէ Արզրում քաղաքի և թէ նորա շրջակայ գաւառների մէջ, մահմետական և քրիստոնեայ ժողովրդի համերաշխ և հանդիստ կեանքը խաղաղութեան ժամանակ, երկրի լուութիւնն ու առատութիւնը, վաճառականութեան յաջողակ պայմաններն և հարստութեան պատկերը, փաշաների իշխանութեան և գործունէութեան չափը, կեդրոնական և տեղական վարչութիւնների յարաբերութիւնը, դատաւորութիւնն և պատուհասներն հայլն։

Տեղագրութեանս նախապատճառն եղել է հեղինակի հարազատ եղբայրը Մաղաքիա, որին ձայնակցել են և Արզրումի քահանաներն ու սարկաւագները, որոնք, ասում է, «յոյժ թախանձեցին և ես զխնդիրս նոցա կատարեցի»։

Յայտնի չէ թէ տէր Յակոբ ո՞ւմ և ո՞ւր է աշակերտել. ինքն ասում է, որ տեսել է Արզրում քաղաքի մէջ Սուրբ Մինաս կաթուղիկոսին, որի մականունն էր Բացախ, և «լուաք զդասս և զքարոզութիւն նորա.» այդ եղել է 1632 թուականից ոչ շատ յառաջ, որովհետև տէր Յակոբի ասելով այդ տարին է տեղի ունեցել Մինաս կաթուղիկոսի մահը Երզնկայում։ Նորա գրութիւնից երևում է, որ բացի Ս. Գրքից նորան մօտիկ ծանօթ են Հայոց նախնի մատենագրութիւններն և Հայաստանի աշխարհագրութիւնը։

Տէր Յակոբի նկարագրած եկեղեցիներ՝ Վերին Հայք՝ ԺԷ դարում իբրև Արզրումի կուսակալութեան աշխարհ ունէր 23 գաւառ, որոնք են՝ 1, Լակզի ձոր, 2, Խորձունեաց եկեղեցի, 3, Ղըզըլջան, 4, Դերջան, 5, Եկեղեաց եկեղեցի, 6, Դարանաղեաց եկեղեցի, 7, Գայլ գետոյ եկեղեցի, 8, Շէռիանու եկեղեցի, 9, Կուկվանցու ձոր, 10, Ծանախոյ ձոր, 11, Խախտեաց եկեղեցի, 12, Ըսպերու ձոր, 13, Իշխանանիստ ձոր, 14, Մամրվան, 15, Վերին Բասեն, 16, Ներքին Բասեն, 17, Ղարա Նաղի, 18, Խալի Նաղի, 19, Ալաշ-

կերա, 20, Մանազկերտ, 21, Ապահունեաց երկիր, 22, Վարդոյ և 23 Թաքման։

Այս դաւառներն, նոցա կառավարութեան հանդամանքներն և բնակիչների որպիսութեան մասին թող խօսի ինքը հեղինակը։

Ա. Ա.

«Ասեմ է զՎերին Հայոց ի Ցակոբ Երիցսէ.[1]»

„Ես նուաստս ոգի յեանեալս և կարդէ քահանայիս Յակոբն անուամբ, որ եմ և ընկեր դեղեցկաշէն մայրաքաղաքին Թէոդուպօլսոյ, որ այժմու դեր և վերոյ և վարկեան ժամանակս է լի ամենայն բարութեամբ, կրկնաբանեցից զվաւելչութիւն սորա. զի սա է Վերին Հայք. և է արևելք. և է շինեալ վասն ամրութեան Հոռոմոց և Պարսից հրամանաւ մեծ կայսերն Ստամբօլայ Փոքրուն Թէոդոսի, որ էր ազգաւ Ֆռանկ, վերակացութեամբ որբոց վարդապետացն մերոց վեղեսոսկայիցն Դաւթի և Մովսէսի աշակերտացն Սահակայ և Մեսրոպայ։

Սկիզբն արասցուք թելադրութեամբ Հոգւոյն Սրբոյ քաղաքիս, որ բարձր է քան զամենայն երկիր, և ունի պատուական դաւառք և աւանք, բերդորայք և Դ. կողմունսն. և իշխող է իշխան սորա բազում տեղեաց, զոր պատմեցից կարգաւ։

Նախ ի հարաւոյ կողմն են դաւառք զովելիք և ձորն Լակզի կոչեցեալ. և ունի գիւղս բազումս ծաղկաւէտ և խոտալիս, մինչև հա-

սանէ ի Խորձունեաց ձորն և երկիր. և ընակութիւն է Հայոց և քրդաց յեայլանի. և ունի երկու աղահանք ջրոյ. որ բաղում տեղիս նոքա լնուն աղով, եղով, ընկուզով և մեղրով:

Եւ անտի երկիրն Խորձունեաց, բաղում գիւղք և դաւառք. այդեստանօք և մրգաւէտ ծառօք զարդարեալ է և ունի գիւղաքաղաք զԿեղի վոքր դղեակ, և է այժմ պարոնանիստ և և կարի ախորժահայք, վարդապետաց սրբոց երաժշտականաց գամբարան և ընակարան. և կայ վանք երկու, այժմ միաբանակեցաց տեղիք, մինն անուն սուրբ Կարապետին և միւսն սուրբ կուսին Մարիամու Աստուածածնին. և է անդ դերեզման եպիսկոպոսին սրբոյ Խաղայ, որ պահպանութիւն է աշխարհին, որ այժմ Հանդստուն կոչեն: Եւ ելանէ երկաթ և գիւլուլայ թօվի. և ունի սինօր մինչև ի Բալու:

Եւ անտի է դաւառ մի դեղեցիկ յոյժ, պարոնանիստ, խոտալիր և ջրուէտ, անասնօք և ոչխարօք ի լի և դեղօրայք Հայոց, որ այժմ Ղզրլջան կոչեն:

Եւ արևմտից կողմն են դաւառք զարմանալիք, առաջինն Հայք, որ այժմ Դերջան ասեն. և ունի գիւղս բաղում, Հայոց ընակարան. և է երկիր դաշտաձև, հացալից, անասնոք, լուղօք և մեղրօք ի լի. և ունի գիւղաքաղաք զԲադաւիճ առ յաին Եփրատայ, և ունի վանս Բ. որ է այժմ տեղի միաբանակեցաց. մինն է անքոյթ ի բարձրաւանդակ տեղոջ, որոյ անունն Պղնձագոյն անապատ ասեն. և միւսն է հիմնարկեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն եղեալ մասն սրբոյն Կարապետին. և միւս բարձրագոյն եկեղեցին սուրբ Դաւիթ անուանեալ բարձրակառոյց խաչերով, և է գամբարան սրբոց վարդապետաց ի պահպանութիւն երկրին այնմիկ. և է անդ դերեզման սրբոյն Աթենագորասի Յ, որ յաւուր Համբարձմանն ուխտ լինի, և բաղում ախտաժետաց փարատումն լինի շնորհօքն Քրիստոսի և սուրբ վկային նորա:

Եւ գնացեալ հասանէ երկիրն յԿեղեաց դաշտաձև և լայնանիստ. և ունի գիւղք և աւանք բաղում, և ունի վանս ի Դ. գամբեթայարկք և հրաշալիք տեսողացն. և է անդ գամբարան սրբոց վարդապետացն Արիստակէսի և Մեծին Ներսէսի ի Թիլն աւանի. և է տեղիք չարչարանաց սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, որ այժմ Տղայ Լուսաւորիչ կոչեն գեղին այնորիկ, զի Տրդատ արքայն անդ եհատ երկոտասան չարչարանք սրբոյն Գրիգորի Բ. ամ. և յետ Բ. ամացն ապա ուղարկեաց ի Խոր-Վիրապն, որպէս գրեալ կայ լիակատար պատմութեանն Լուսաւորչի: Եւ ունի քաղաք մեծ զեղնկայ, որ լի է

ամենայն բարութեամբ, բամպակիօր, այգեստա-
նօր և մրգաբեր ծառօր: Եւ կայ ի մէջ քաղաք-
քին այժմ Ե. եկեղեցի քահանայիւք և ժողո-
վրդեամբ լի, և է գամբարան սրբոց վարդապե-
տացն Յոհաննէս Պլուզին, որ Լուսաւորչին Ան-
ձինքն է ասացեալ, և Կիրակոս վարդապետին,
որ Արևելքն է ասացեալ, Կեղեցի Ղուկաս վար-
դապետին, որ զՀռոմայեցոց տօմարն և այլ բա-
զում ոտանաւորս է շարադրեալ, և Կիլիկիոյ
Մինաս կաթուղիկոսին, որ մականուամբ Բա-
ցակս կոչիւր. զի տեսաք աչօք մերովք և լուաք
զդասս և զբարդութիւն նորա ի քաղաքս Ար-
զրում. և գնացեալ Եղնկայ էառ վանքն ՌԶԱ.
թուին և եղեալ կայ ի դուռն սրբոյն Սարգսի
հետ մեծին Ղուկասու, որ յաբ և նման էր սրբ-
բոց հայրապետացն ատուածաբանութեամբ և
սրբութեամբ լի: Եւ կայ ի վերայ ճանապարհին
վանք մի հռչակաւոր՝ Միաւոր սուրբ Կարապետ
անուն առ ստորոտով լերին մեծի, որ Զարատախ-
լու կոչին, որ գնացեալ սինօռն հասանէ մինչև
ի Շեղ Ղարահիսարն, որ է Կողոնիայ:

Եւ անտի յառաջ գնացեալ ի միւս կողմն
հասանէ երկիրն Դարանաղեաց, որ ունէր գիւղք
և աւանք և բերդ ամուր և անառիկ ի վերայ
զետոյն Եփրատայ. զի ինքն Տրդատ շինեաց և
եդ անդ զԱշխէն տիկինն և զբոյր իւր զԽոսրո-

վիդուխան. և է յոյժ վայելուչ և մրգաբեր փոք-
րիկ քաղաք և ընակութիւն ազգիս Հայոց. և
ունի պայծառ եկեղեցիք և վանորայք. և լինի
յոյժ ախորժ և զարմանալի պանիր, որ ի Ստամ-
պոլ և յԱրզրում փաշային ազգս կումատու-
ցանեն: Եւ անդ է լեառն Սեպուհ գամբարան
Լուսաւորչին մերոյ և սրբոյ կուսին Մանեայ: հալբակ
Եւ անդ կախեալ կայ յօդն Հաւհալի՝ թուրն
Տրդատայ, զոր խաչ ձևացոյց սուրբն Գրիգոր.
որ գնացեալ արժանաւորքն տեսանեն զնա. որ-
պէս և Պլուզ վարդապետն շարադրեալ է յերգս
շարականին ասելով «զԷնն արքայական ոպան-
մանն գործի կենաց արքային կենաց:» Եւ ի մէջ
ձորոյն է գերեզման որդւոց և թոռանց Լուսա-
ւորչին ի Թորդան. և կայ անդ վանք մի Աւագ,
զոր սուրբ առաքեալն Թադէոս հիմնարկեալ է:
Եւ յորժամ էջ սուրբն Գրիգոր դառ ի վայր ան-
հուն լերինն ի վերայ ծնկացն, որ այժմ Գոհա-
նամ ասեն, զի կամէր այնպէս գնալ ի սուրբ
յերուսաղէմ վասն թողութեան հօրն իւրոյ Ա-
նակայ, և յորժամ էհաս ի ձորն, ոչ հանդուր-
ժեաց Միածինն Ատուած ընդ չարչարանս ծա-
ռային իւր՝ այլ առաքեաց սերոբէս՝ զի ոչ ե-
տուն թոյլ, այլ ասեն թէ անհնար է արդարա-
նալ հօր քում՝ ի դուր մի՛ աշխատիր, համարե-
ցաւ քեզ Ատուած արդարութիւն. և անդ շին-

եաց վանք մի յանուն սուրբ Սերովբէէին, ուր
ետես. որ է միաբանակեցաց տեղիք մինչև յայ-
սօր: Եւ գնացեալ հասանէ մինչ քարաձորն Ակ-
նայ և Արքակերու: Եւ յետ կոյսն ունի Կամախ
Գ. գաւառս՝ Հասանովայ, որ բաղում գիւղք
կան, և Արմտաններն, որ գնացեալ հասանէ
մինչև ի Տիւրկէ, և միւս կողմն է Ղուռուչան,
երկիր խոր և թաւամայրի, որ ի գրոց Աղնցիք[5]
ասին: Ասան էին և սուրբքն Ռոստոմատիսեանքն,
որ գնացեալ ի Սեբաստիայ մարտիրոսացան վասն
անուանն Քրիստոսի:

Եւ անտի շրջեալ դէպ ի կողմն հիւսիսոյ
են գաւառք զարմանալիք, առաջինն է երկիրն
Գայլ գետոյ[6], որ ունի գիւղս բազումս, ձորա-
մէջս, մայրիս և անտառս յոլով, և ունի գիւ-
ղաքաղաք զԿարմիր, և բնակիչք երկրիս Հայ և
Տաճիկք են. և ասան եւանէ Գայլ գետն և դի-
մեալ ի յարևմուտս գնացեալ հասանէ ի Նիկե-
սար քաղաքն:

Եւ յետ այնորիկ երկիրն է Շէդյանու. բա-
զում գիւղք և աւանք, և բնակիչք երկրիս Հայ,
բազում Հռոմք և Տաճիկք են, և է յոյժ թաւ
մայրիք, սար և ձոր անտառախիտ, և ունի բերդ
զՇէդիան, և գնացեալ հասանէ մինչև ի դաշտն
յԱշխարհու:

Եւ անտի շրջեալ ի ձորն Կուիվանցու, որ

բնակութիւն է Հռոմոց և ունի գիւղք և ա-
ւանք և վանորայք բազումք, և ունի բերդ ա-
նառիկ զԿուիվանց, և ունի սահման մինչև
Սև ծովն մեծ, որ է Պոնդոս:

Եւ անտի ուղիղ ի կողմն հիւսիսոյ ձորն է Ծա-
նախոյ. ունի գիւղք և փոքր բերդորայք, վանո-
րայք և հրաշալի անապատք թագաւորաշէնք Հո-
ռոմոց, որ բնաւ կին և անմօրուս մարդ ոչ մտանէ
անդ. որք այժմ կան անդադար ի փառաբա-
նութիւնս Աստուծոյ: Եւ ունի քաղաք զԿիւ-
մուշխանան, որ է վայելուչ և մրգաւէտ վայրք.
և բնակիչք սորա Հայ և Հռոմք բազում, և կայ
եկեղեցիք հրաշալիք Հայոց և Հռոմոց. և ելանէ
ասան ոսկի և արծաթ բնակիր բազում. ելանէ
նաև պղինձ, արճիճ և երկաթ բազում, որ Աբ-
զրում և շրջակայքն նորա լնուն. ունի ձորս
այս սինոր մինչև ի Տրապիզոն առ ծովակն:

Եւ անտի շրջեալ ի միւս կողմն հիւսիսոյ
է երկիրն Խախտեաց, որ ունի բազում գիւղք
և աւանք և վանորայք. և է այժմ ամենեքեան
միաբանակեցաց տեղիք և վարժարան աստուա-
ծաբան վարդապետաց. և է սա քաղցր և հա-
մեղ երկիր, և Հայոց բնակարան, և ունի բերդ
մի պարսպաւոր անառիկ ի վերայ բարձրաբերձ
վիմի հաստատեալ, որ այժմ Բաբերդ ասեն. և
անցանէ գետն ձորոս ընդ մէջ քաղաքին, և ե-

լանէ ձկունք անթիւ և զանազան. և են ընակիչք ոսրա մարդասէրք և հիւրընկալք, քրիստոնեայք, և ծաղրերես քահանայք և տօլմաթաւորք. և ունին այժմ եկեղեցիք Գ. զարմանալի տեսօղացն, որ կան անդադար ի փառաբանութիւնս Քրիստոսի Աստուծոյ: Եւ է երկիրս այս հացալից, ջրաւէտ, խոտալիր, ոչխարօք և անասնօք ի լի, լուղ և մեղր ոսկետակ և անթիւ, որ հիանալի է տեսօղացն. և ունի սինօր մինչև ի Հռոմոյն և Սև ծովու յաւին և Ռոսկիրու:

Եւ անտի հասանէ ի ձորն մեծ և անհուն, որ ունի դղեակ մի պարսպաւոր շինեալ ի վերայ ձորոյս գետոյն, որ այժմ Ռոսկիր ասեն. և է սա պարսնանիստ, և ունի դիւղս և մայրայս Գ. և մայրիս յոլով. է և ձորն այդիք անթիւ և ծառոց պտուղք յոլով հոտով և համով. և ունի վանք մի հրաշալի անուն սրբոյն Յովհաննու Մկրտչին կառուցեալ, որ է այժմ միաբանակեցայ տեղիք. և ամենայն տարի սուրբ խաչվերայցի տօնին դնան անդ ուխտաւորք բազումք: Եւ ունի ի գլուխս լերանցն յեայլաներ յոյժ խոտաւէտ և ջրաբուխ, որք բազում հօտք ոչխարաց և անասնոց ճարակաւորեալ. լինի լուղ և մեղր անթիւ. և ընակիչք երկրին բովանդակ Հայք. որ գնացեալ հասանէ մինչև ի գիւղն Խոտաւէջուր. և ունի վանք երկու, և այլ եկեղեցիք

բազում, որ այժմ աւերեալ և ամայի կան ի ձեռս Տաճկաց:

Եւ շրջեալ միւս ձորն Իշխանանիստ, որ ունի բազում գիւղք և փոքր բերդորայք և վանորայք ի գլուխս լերանց. և ունի բազում յեայլանի ակնարուխս, անասնոց և խաշանց վայելուչ վայրք. և ի մէջ ձորոյն է այգիք և բուրաստանք և պտուղք ծառոց զանազան և անթիւ, և գինի անչափ յոլով և քաղցրահամ, որ մինչև է. տարի այնպէս անապական է, որ թուի թէ այսօր հարեալ է ի հնձանէ, որ ոչ սրտի դողումն կամ գլխացաւութիւն բերէ, այլ ախորժէ ըմպողացն: Եւ ունի ձորս այս բերդս անառիկս Թորթում, որ պարսնանիստ է և իշխող է մինչև ի բերդն Ագրակ առ յաւին ձորոյս գետոյն: Եւ լինի Թորթումս այս տանձ, ևս առաւել խնձոր զարմանալի հոտով և համով, որ հիացեալ տացեն փառս Աստուծոյ. որ մէկն այնչափ մեծ է, որ Բձ. դրամ կշռէ, որ է Ա. նուկի, և է գունն կարմիր կամ սպիտակ յոյժ, որ հանապազ ի Ստամպոլ և ի դրունս մեծամեծաց ընծայ մատուցեալ լինի, որ անուամբ շահալմասի ասեն: Եւ կայ ի մէջ ձորոյն մեծամեծ վանորայք Վ. քրոց ի գիւղն Խաչաս, Ոզկ և Իշխան, որ յոր և նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբ Սոփի ի Կոստանդինուպօլիս: Եւ էին բնակիչք

երկրիս կէսն Հայ ազգաւ և կէսն կրօնիւք Վրացի, բայց Հայի լեզուաւ խօսէին, իսկ ի բաղմանալ Հոգարարացոյն ի ժամանակս մեր ի Թուականիս ՌՂԲ. ամին եղև հրաման մեծ կայսերէն Ստամպօլայ ի վերայ մօլլայի մինչ, որ էր յոյժ անուանի և առաջակայ էր քաղաքիս Արզրումայ և փաշաներաց՝ Զաֆար անուն ժանտաբարոյ և ըրկստոնէից Թասկայ, յաշխարհաղիր առնել զբոլոր շրջակայ երկրիս Արզրումայ: Եւ էլեալ արար դաւտար և կապեաց ծանր խարաճ, և ելից մեծ և վոբբ ի Թագաւորական դաւտարն. և երկրիս Վրացիքն ամենայն յերկուցեալք ի յահէ խարաճին դարձան յօրէնս Մահմետի. ապա ազգս Հայոց մնացին ի վերայ հաւատոցն ողորմութեամբն Քրիստոսի և աղօթիւք սուրբ Լուսաւորչին: Եւ ձորս այս յոյժ բարեաւլի էր. զքաղաքս մեր Արզրում, Բասէն և շրջակայ գաւառքն ամենայն սոքա կուշնուն գինեաւ, խաղողով և ձիթապտղով և ամենայն մրգով:

Եւ անտի շրջեալ ի կողմն յարևելից է գաւառ մի մեծ և բաղում գիւղք, և ընակիչք երկրին Հայք և Վրացիք. և ունի բերդ մի բարձր և անառիկ, որ այժմ Մամբվան կոչեն. և է ի մէջ բերդին վանք մի փառաւոր, որ յանուն սրբոյն Գէորգայ է կառուցեալ, որ այժմ Ուլէթ

ասեն. և է ինքն պարոնանիստ և հայալից երկիր, և կարի խոտաւէտ, և ակնաբուխ ստուն ջրոց յոյժ. և է ի մէջ մայրի անտառացն որ փիճի ասեն, և Աղատմայրի կոչեն, որ ոչ ընկիզին տեսեալ որ կայ և ոչ ծայրն հասեալ. զի ասեն թէ գնացեալ հասանէ մինչև ի Կովկաս լեառն ի դուռն Աղանաց ի Կասպիական ծովն, որ է Կիլան: Եւ երկրիս այս լի է պաճարեղինօք և ամենայն բարութեամբ. և ունի սինօռ մինչև Օխտիք քաղաք, և միւս կողմն մինչև ի Բասէն:

Եւ անտի շրջեալ ուղիղ դէպ յարևելս, է երկրին Վերին Բասէնոյ բաղում գիւղք և աւանք. և ունի ծաղկաւէտ լերունք ջրալից և տուն հացի, անասնօք և ոչխարօք ի լի, իւղ և մեղր եբրև աղբիւր, գեղեցիկ և վարժ քէֆլան երիվարք բաղում, որ տեսողացն հիացեալ փառս տային Աստուծոյ. նաև գեղեցիկ շինեն դոյլ և կուժ փայտեայ զանազան, յոյժ օգուտ և ախորժ է ըմպողաց ջուր ի նմանէ. և են ընակիչք երկրին Հայ, և Թուրք սակաւ. և ունի մեծ բերդ պարսպաւոր ի վերայ վիմի հաստատեալ, որ հայ բարբառով կոչեն այժմ Դորոնք, և Թուրք բարբառով Հասան-Ղալա կոչի. անցանէ դէտն Արաղ ընդ դուռն քաղաքին, և է առ յոլոն ջրոյն Ջերմ ջուր, որ յոյժ ցաւոց և ախտաժե-

տաց օգտակար է մաելոցն և Ջուրն. և ելանեն ձկունք անթիւ և ազգի ազգի համեղ ճաշակողացն: Եւ է բերդս այս մեծ պարոնանիստ և հեծելոք ահաւոր խմբով և պատերազմի: Եւ ունի վանք հռչակաւոր և դմբեթայարկ շինեալ ի մօրէն Մագիստրոսին յանուն սուրբ կուսին Մարիամու կառուցեալ, որ է այժմ բաղում միաբանակեցաց տեղիք. և ունի թեմ երկոտասան գաւառանի: Եւ ի գլուխ լերին վանքիս այսորիկ բուսանի զարմանալի ծաղիկն համասիւռ ԺԲ. տարին մի անգամ. որ թէ հանդիպեալ ես դու համասիւռի պատմութեանն, դատանես ի լերինս այսմիկ որ Դրունք՝ կոչի: Եւ ի հարաւոյ կողմն ի մէջ ձորակին ունի բերդ մի փոքրիկ, որ հասեալ է մինչև ի յօդն անահ ի մեքենայից, որ Յաւնիկ կոչի. անտի էր ճգնաւորն Գառնիկ, որ ամփոփեաց տեսլեամբ զմարմին Լուսաւորչին մերոյ ի Թորդան. և ունի սինօր Բասենս այս լերին մինչև ի Զարափխանան և ի Կաղզուան և ի Թարգմանն:

Իսկ Նեքքին Բասենն է պարոնանիստ և ունի գիւղաքաղաք Զնորատան առ յաւին Երասխայ. և ունի բերդ Զիւին, Մէժէնկերտ և Կէչէվան. և է ի մէջ բերդին դերեզման Խաչատուր Կեչեռացուն: Եւ այլ բաղում գիւղք ունի և մայրիք,

որ գնացեալ հասանէ մինչև ի Կարս, ի Պարտէզ և ի Սօղանլուն:

Եւ անտի ի լեառնակողմն հարաւոյ են գաւառք երկու, որ ասեն Ղարա Եաղի և Խեալի Եաղի. են բնակարան և յեայլանի Քրիստոս, որ հանապազ վրանաւ Կեղարու շրջին ոչխարաբք և անասնաբք ի լի. և գնացեալ հասանէ մինչև ի լեառն Սուկաւէտ: Ի գլուխ լերինն է դերեզման սրբոյ Սուրբիսանանցն, որ ամենայն տարի յաւուր կատարման սոցա ըղձիկ աղբիւր ելանէ ընդ ոտամբ նոցա՝ աւազանին. ով որ որ հանդիպի նոյն օրն, բժշկութիւն լինի ամենայն ցաւոց և վարատումն ախտաժէտաց. որ այժմ Քօսատաղ ասեն:

Եւ ի ստորոտ լերինն է երկիր մի մեծ և դաշտային. գիւղք և աւանք բաղում, և բերդաբնակք անառիկք առ ստորոտով լերանց մօրն Մասիսոյ. է ունի բերդ պարոնանիստ որդոցէ որդիքն՝ Շաւշիկ, Պայազիտ, Խամուր գալան և Դիադին ի գլուխս դաշտին. աստի ելանէ մեծ մասն Եփրատայ, և քուքուրդ բաղում, և գնացեալ ի մէջ դաշտին, և լինի դեռ մեծ և անհուն: Եւ երկիրս՝ այս ի դրոց Վաղարշակերտ կոչի, և այժմ Ալաշկերտ ասի. և է այժմ խոտաւէտ, ջրալից և հովիտ. անասունք և հօտք ոչխարաց երբև դաստեղս երկնից սփռեալ կան

ընդ երեսս դաշտին. լուռ և հաց բաղում, ազգի ազգի գեղեցիկ, և տաճիկ ձիւն պարոնաց և վաշանեցաց հեծանելի: Եւ լիշխան երկրիս է մեծ պարոն և բաղում զօրաց տէր. և ունի սինօր մինչի շրջապատն Մասիսոյ երկրին Երէվանայ, և միւս կողմն մինչ Արտազ, որ է Մակու և Ցաղազան: Ասա եկեալ դէմ Թագաւորն Տրդատ ամենայն զօրօքն Հայոց. որ եկն ի Ղարայսարու կաթուղիկոսութեան կարգաւն հանդերձ Անկեղատն լիշխանաւն. որ ունէին ընդ լուրեանս ըզմարմին սրբոյ Կարապետին և Աթանակինեայ սուրբ հայրապետին, որ եկեալ հանգուցին ի Տարօն, և է այժմ մեծ վանք հռչակաւոր շինեալ ի վերայ նորա:

Եւ անտի դայ հասանէ ի քաղաքն Հայոց Մանազկերտ դաշտաձև, պարոնանիստ. ասա արար առանձին ժողովք Հայոց կաթողիկոսն Յոհան Օձնեցին ձիկ. թուին, որ ի ժամանակս Եղբի կաթուղիկոսին այլայլեալ և խանդարեալ էր, վերստին հաստատեաց զնիկիական դաւանութիւն և սուղեաց զամենայն կարգս և կանոնս. ձեռնտուութեամբ լիշխանին Արծրունեաց Վ.արդպատրիկին զաղգն Հռոմոց, որ եկեալ և անաւորեալ էին յերկիրս Հայոց. զամենեսեան հանեաց և աբսորեաց տամբք և ընտանեօք մինչև առ յաւին Պոնտոսի, որ է Սև ծովն: Եւ ունի

բերդ սրբատաշ, մեծ և պարսպաւոր, եկեղեցիք և վանորայք հրաշալիք տեսողացն, գիւղք և աւանք բաղումք խոտալիք և ջրաւէտ, հօտք և անասունք բաղում դէրք և գեղեցիկք և վարժ երիվարք, և ձուկ զանազան. և է սա քաղաք երկիր և ընակարան Հայոց և Մարաց և ունի սինօր մինչ ի Արճէշ, Խլաթ և Արծկէ:

Եւ անտի դայ երկիրն Ապահունեաց պարոնանիստ, որ այժմ Խնուս ասեն. և ունի վոքրիկ գղեակ մի պարսպաւոր, ունի գիւղք բաղումք հացալից և խոտալիք, և հովիտք բաղում ոչխարաց, լուռ և մեղր երբև զջուր առատ, և ունի աղբիւր աղի, որ երբև զառու հոսի. քանի որ պիտոյ է, ի կալս և ի վոսս թողուն, որ արեգանն հայեցեալ չորացուցանէ. երբև զցորեան ժողովեալ, դարս և կուտակս առնեն և վաճառեն. զոր բաղում զօրաց թոշակ լինի. ապա թէ ոչ պիտոյանայ, թողուն, որ գնացեալ խառնի Եփրատ գետն: Եւ ասի ելանէ արապի ձիւն վարժ և քէֆլան. և ընակիչք երկրիս Հայք բաղումք և Քուրդ. և ունի սինօր մինչև ի Զարբհօր ի խառնուրդս Մուրատ գետոյն, որ է Եփրատ:

Եւ անտի է դաւառ մի վոքրիկ, որ այժմ Վ.արդոյ ասեն. և ունի գիւղք գեղեցիկաշէնք Հայոց, և Քրդաց յեայլանի և անգեայք բա-

զում· իւղ բաղում, և ամենայն բարութեամբ լի, և ունի սինօռ մինչի վանս Գլակայ ուրբ Կարապետի, և միւս կողմն մինչև եկիցն Մանդակունեաց, որ այժմ Գլենճ անուանեն:

Եւ կայ յայս կողմն եկիցս մի մեծ և լեռնային սառնասուն, անվայտ և ձմեռնային պարոնանիստ մեծ, որ այժմ Թաքման ասի· և ունի գիւղք և աւանք բարում, և Բրդաց վեայլանի, որ ամառն վրանաւ Կեղարու շրջին, և ունի աղբիւր աղի՝ դանագան և անթիւ ակունս ջրոց բղխելոց սառն և բարեհամ, որ այժմ Բինգօլ ասի· որ գեան Արազ ի սորա լերանցն եւանի· և գնացեալ ելանի ի մէջ դաշտին Բասենոյ· ետ եկիցս անապատական լերև գլուր, անասունք և ոչխարք մեծամեծք և գեղեցիկք, քէհլան ձիան բազում, և ունի սինօռ մինչի Բասեն, Արզրում և Կեղի և Լակզի:

* * *

Այս է թեմ և վիճակ՝ Արզրում նստող վիճակին կերուածքն 8. զի ամենայն շրջակայ բերդոցայքս և գաւառքս, զոր կարդաւ պատմեցի, հուքմի և հրամանի ներքև սորա են· զի ոչ ոք կարէ կեալ ընդդէմ հրամանաց սորա ոչ պարոն, ոչ եշխան կամ սուլթան կամ դատաւոր,

այլ հնազանդ ամենեքեան· և թէ լինի ոք, որ խոտապարանոցի, առժամայն սրոյ ճարակ կուտայ զինքն և զիւրայինքն: Եւ թէ լինի որ մէկ Հայ կամ Թուրք կամ շինական Բուրդ կամ գիւղորէից ազայ ի գանդատ գան, առժամայն կուսպանանէ կամ իւր գաւառէն կուհանէ և ի բերդէն կուվանէ, և զիշխանութիւնն այլոց կուտայ, և կամ կութալանէ կաշառօք զինքն· ոչ ոք կարէ ընդդէմ հրամանի նորին կեալ· կամ կումահացուցանէ կամ կուկեցուցանէ, կուզէ մօլլայ լինի, կուզէ դատաւոր, դատասանաւ կուդատէ և ի կենաց կուհանէ:

Եւ եշխող է սա մինչև ի Բալու Համիթայ վիճակին կերն, դէպի արևմուտս մինչ ի Թոխատ և ի Սեբաստիոյ վիճակին կերուածքն, և ի հիւսիսոյ կողմն մինչ ի Տրապիզոն և Անկլ խոյ վիճակի կերուածն, և արևելից կողմն մինչև ի Կարս և Կաղզվան, և Ալաշկերտու եկիցն, մինչև ի Վանայ ծովն, մինչև ի Մշու եկիցն, մինչև գայ հասանի ի Գնջան եկիցն և Կեղի, որ սա շրջապատեալ հասանի կրկին ի Բալու:

Այս է սինօռ և կերուածք վիճակին մայրաքաղաքիս Արզրումայ: Եւ ունի սա ընդ ձեռամբ իւրով խսպահիք, գիւղորէից տեսուչք, ենկիչարիք և բերդորէից պահապանք թագաւորական, զուլ ու ծառայ տամբ և տե-

զոք. որ գրեալ կայ զանուանս նոցա ի գրքանն սրբունի, որ հանապազ օրհնեան և հայն կուտեն Լ.Ռ. ոգի, թոռ զԲրդաց պարոնայքն, որ առանց գրի և թոշակի են, և փաշային հետ բերեալ զօրքն, որ ոչ են մնացեալքն, այլ յորժամ փաշան իւր տեղայն փոխէ Թադաւորն, առժամայն ինքն և իւրայինքն ամենայն ելանեն ի քաղաքէն յայսմանէ: Եւ թէ մեծ պատերազմ լինի, Թադաւորն հրամանաւ իւր կերուածքովն ամենայն ՃՌ. Թուրքի ձիաւոր ելանէ քաղաքէս. ապա այնպէս բուռն և ստոյգ հրաման ունին Օսմանցիք, որ մէկ մատ գիր ուղարկեն, տասն օր չի յամենաւ, իւր մօտն դառնել պարտին թէ պարոն և թէ դաւառաց տէր. և կամ թէ Թադաւորն և իւր վէզիրն ի Սատամպօլայ գիր կամ ամր ուղարկեն, քանի մեծ փաշայ լինի և իւրն սիրական, առժամայն վաղվաղակի ելանի բերդէն ի դուրս, ոչ կարէ մէկ սահաթ յամենալ: Եւ թէ քանի որ լաւ և խաղաղասէր փաշայ լինի, մէկ կամ երկու կամ. երեք տարի մընայ, այլ հնար չկայ, Թադաւորն կամ վէզիրն մանզուլ կանեն և ուրիշ փաշայի կուտան քաղաքն. ապա թէ չար և ժանտ լինի փաշան, և անողորմ կողոպտէ զերկիր, և իրաւունս ոչ տայ առնել, չորս հինգ Հայ որ գնան դանդատ ի Սատամպօլ, վաղվաղակի զգլուխն կուկտրէ իւրն

և խորհրդակցին իւրոյ ծառայի արդարն ընդամբարշտին, որ ահաբեկեալ լինին զօրքն և պարոնայքն ամենայն, և տայ զփաշայութիւնն յետին ծառային իւրոյ Թադաւորն. և ամենեքեան հնազանդին նմա, զի չունի սահման, որ օձախ ունենայ կամ իշխանութիւն որդոյէ որդիս տալ, այլ ում որ իւրն առաջ է շնորհս գտեալ և ապասաւորեալ է թէ Վ.բացու զաւակ է թէ Հոռմի կամ Հայի կամ Առնաուտի, նմա տայ զփաշայութիւնն: Ապա չէ քրիստոնէից կամ Հայոց նման, որ փոքացեալ ասիցէ, թէ ես պարոնի որդի եմ, և առիւծաբար ընդդէմ դառնայ Թադաւորին, այլ մերկապարանոց, կամ իշխանք և ընկերաբարեկիք հնազանդին Թադաւորին:

Այսպիսի կարգ և սովորութիւն է Օսմանցւոց և Պարսից մահմետականաց Թադաւորացն: Զի ի ժամանակս մեր, որ տեսաք աչօք մերովք Ռ.Հ. Թուէն ի վեր, տարի վերայ տարւոյ առաւել մեծացան և փարթամացան ընչիւք, զօրացան հեծելօք և բազում քաղաքս և կղզիս առին ի Ֆռանկայ, Ուռուսից 9 և ի Պարսից, յարևմուտս մինչև ի Կրետէս կղզին առին և տիրեցին. այս Լ. ամ է, որ դեռ ևս պատերազմի է ընդ Թուճին 10 Վանատիկայ և Ջանայ. զմեծ բերդն, որ ի Կրետէ, անթիւ մարդով խաղնայով ելից, և ինքն ոչ նուազի մարդով և դրամով. զի այս Հայոց

աշխարհէս մէկ մարդ Թուրք գեռ ևս ոչ գնացեալ է ի պատերազմ. և թէ մէկ մարդ որ անկանի ի մէջ պատերազմին, ի Սատմպօլայ տան տեղ կուգրեն. և այլ բաղում կղզիք ալրեցին մինչև ի Թենուս և ի Զաղայիրն, ի հարաւոյ կողմն յԵգիպտոսէ մինչև ի մէկ ամսէն ճանապարհ գէպի Հապաշտան ալրեցին և անտի մինչև ի յԵամանու եկեղեն, ուր զահգան կելանէ, և գնացեալ ի Մուխայ, հասին Մաքա, Մատինան. Արապիստան և Շամատունն բովանդակ մինչև ի Բաղտատ քաղաք և ի Հնդկաց ծովն ի Բասրայ Բանտաբ քաղաքն ևս վիշային ձեռքն է. և ի հիւսիսոյ կողմն մինչև ի Լեհաց եկեղեն Թենայ գետի եղերքն ամենայն Մաճարք ևս հարկատու արարին. Կաֆայու եկեղեն և Թաթարիստան բովանդակ մինչև Ուռուսի բերդն Աղախու առին և ալրեցին, նաև Սև ծովու եղերքն ամենայն, որ գնացեալ հասանի ի բուն Վրաց տուն. և առին պՊաշխադուին (sic) Թագաւորի քաղաքն և ալրեցին մինչև ի Թիֆլիզու սինօռն, և ի արևելից կողմն Ալբանայ եկեղեն, Զլտրոյ և Շերակվանայ եկեղեն, Անի քաղաքն ևս Թեմովն մինչև ի դուռն Երէվանայ. և միւս կողմն Վանայ եկեղեն ամենայն մինչև ի Խոյ և ի Սալմաստ և ի Զուլամերիկ. և Հադարացւոց եկեղեն ամենայն Մուկաց և Սասնոյ գաւառն և

ամենայն Բրդատան, Ատրեստանեաց եկեղեն ամենայն մինչև ի Շահրազուլ քաղաքն ևս վիշային է:

Այս ամենայն անհուն աշխարհացս ալրեցին, որ երբև զձու ի ձեռին ունի Թագաւորն Սատմպօլայ մեծ կայսրն. զի ալրեալն ամենայն կարող է առանց բերդի պահել, մէկ մատ գրով կամենայ կուկեցուցանէ, կամենայ կումահացուցանէ: Զի ոչ Ղզլպաշ և ոչ այլ Թագաւոր կարէ պատերազմաւ կալ ընդդէմ սորա: Զի ըստ Աստուածաշունչ գրոց պատմութեանցն որ գրեալ կայ, թէ յերուսաղէմայ եկեղեն երկոտասան Թագաւորութիւն բաժանեաց, իսկ դա մէկ փոքր վիշայի է տուել: Եւ այժմ ՅԾ. Թագաւորութիւն ի բուն ունի մեծ Թուրքս այս. ոչ թէ գովելով պատմեմ զայս, այլ արտասուելով և աւաղելով գրեմ, յիշելով զսոպռ և զբերտ կարգ և զվարք դօրացն Հայոց, որ անհնազանդք եղեն Թագաւորաց և հայրապետաց, զի արտուղի գնացին և ամբարտաւան շաւղօք շրջեցան, մինչ որ անբարկանալին Աստուած խեթիւ հայեցաւ, և ներողութեամբն Աստուծոյ Թագաւորեցին սոքա. որպէս առաքեալն Պօղոս գրէ թէ հեթանոսք օրէնս ոչ ունին, բնութեամբ ըստ օրէնացն շարժին, նմանապէս նոքա, հնազանդ լինելով փոքրն մեծին,

առաւել զօրացան. զի որչափ պաղիր և անօրէն գործք կայ, որ քրիստոնէից խոտելի է և պարսաւելի, զայն սոցա օրէնք և գործելի է. զի ցեղ ու ցեղ և ազգի ազգի սուտ պատճառաւ հարկապահանջութիւնն և կեղեքելն անասելի է և անպատմելի, անողորմ առնուլն ի քրիստոնէից. զի ինձ այսպէս թուի, թէ Դանիէլ վասն սոցա մարգարէացաւ վասն չորրորդ գազանին, թէ ահեղ էր և զարմանալի, ուժէր և զմնացեալսն առ ոտն կոխէր. Մահմետն ի մեր թուականին Կ. տարին եղեալ է. և այսչափ տարիք ուտեն և գազան քրիստոնէից առ ոտն կոխեն ամենայն կողմանց. զի որ էհարն, նոյն ինքն քրիստոս զազգս Հայոց ի ձեռաց սոցա ամէն։

* * *

Եւ ես դարձայց առաջիկայ պատմութեանս Թէոդուպոլսոյ բերդիս գգնդաձև բոլորակութիւնս, զմուան և զելն այժմուս, զգեղեցիկ ամառն, զցրտասառոյց ձմեռն, զբնակիչք քաղաքիս, թէ որքան է և կամ ով որ են ժառանգողք սորա։

Նախ և յառաջ բերդս այս պարսպաւոր է, և մէկ քան զմէկ բարձր աշտարակ, և ամենայն

պուռճքն խոսրովային է, որ է շէշխանայ, և մեծութիւն սորա երկու կանոն սաղմոսիւ 11 հաղիւ կուշջապատի, և ունի չորս դուռն՝ արեւելք, արևմուտք, հիւսիս և հարաւ։ Շինուածք, որ ի մէջ սորա զանազան և զարմանալի, որբատաշ և փայտեայ գեղագործեալ ծաղիկով քօշկեր, և թրծեալ աղիւսեայ պալատներ, բաղանիք և մատրատներ, բարձր ասեմ քարեայ գրբամբք շինեալ ոսկեզօծ, որ յար և նման Բիւզանդիոյ քաղաքին։ Եւ ամենայն տուն Հայի և Տաճիկի միապէս շինեալ կան և շինին. զանազանութիւն ոչ կայ, և առանց ջրոյ ոչ որ է. ուրեք ուրեք որ գտանի, որ ոչ գոյ աղբիւր ի տան. բերեալ գերեսօք անդնդոց և կէսք բերեալ ի պորտոյ քաղաքէն ի բարձրաւանդակ տեղոջէն. աղբիւրք սառն և բարեհամ, որ զբրնչաշմայ ասեն. և կան այլ աղբիւրք անուշահամ, որ Ջաննաթի կոչեն. որ ի Վարդավառն ամիսն այնպէս սառստիկ սառն է, որ ատամ շի հանդուրժել, որ կուշտ ըմպես. որ մէկ գառն ուտես և ըմպես ջուրն, առժամայն հալէ և մարսէ. այնչափ աղբիւր կայ ի մէջ բերդին, յորժամ ի դուրս ելանեն երկու ջաղացք յառաջ կուհանեն։ Սպանդանոցք և շուկաներ, սալաբակալ խաներ և փութիկաներ, քարտաշ գեղեցիկ շինուածովք եկեղեցիք բաղումք, որ այժմ

ի ձեռս Տաճկաց անկեալ կան, զորն արարեալ են ամբարանոցք, և զորն քակեալ և քայքայեալ են։ Դեռ ևս կայր ի մէջ բերդին եկեղեցի մի սագաշէն գեղեցիկ։ Սանոս Զէլէպի ոմն բարեպաշտօն Հալպցի, եկեալ ի քաղաքս Ռ.Հ. Թվին հրամանաւ Սուլթան Մուրատ Թագաւորին և վէզիրին Լուրոյ Խոսրով փաշային, եղև մեծ մարտաւոր և կօմբուկչի Աբզրումայ քաղաքիս, և եղիտ շնորհս առաջի փաշաներաց, իւր հանճարեղ իմաստութեամբն և խոհեմութեամբն վարեաց զիշխանութիւն իւր, զքան եկաց, զի տայր Թագաւորին ՃՈ. զուռուշ, թող զփաշային և իւր կարեացն, և առաւել այնչափ վարձք արար, որ Աստուած մնայն գիտէ, զի մինչև Ռ. գերուց ազատութեան առիթ եղև ինքն, զի այն ժամանակն մեծ թուրքս այս մարտ մտեալ էր Պարսից, ՌԼԵ. Թվէն ի վեր պատերազմէին և աւերէին գերկիրս մինչև ՌՁԹ. Թվին, որ գնաց Սուլթան Մուրատն տասն անգամ ՃՈ. ղուռով և էառ զԲաբելոն ի ձեռաց Պարսկին, և ելից զօրք ըստմօք և դարձաւ ինքն և վաղերն ի Ստամբուլ։ և վաղերն այն Առնաւուտ էր և յոյժ հանճարեղ, Մուստաֆայ անուն, որ բազում ժամանակս վարեաց զիշխանութիւնն, առինքն ունելով զարքունական մատանին։ և արար խաղաղութիւն և հաշտեցոյց Սուլթան Մուրատն հետ Ղզլպաշին։ ուխտ և դաշինս եղին, որ Երէվան Ղզլպաշին լինի և Պաղտատ Օսմանցուն, այլ միմեանց թուր չքաշեն, վաճառականք և շինականք աներկիւղ գայցեն և գնասցեն։ հօտք ոչխար և նոցա այժմ խառնին ընդ միմեանս, զի երեք տարին անգամ մի առաքէ շահն ընծայ ի Ստամբուլ ապրշմեղէնս, ֆիլս, մեղրիւրիս և այլ սլետոյս թագաւորացն։ զի խաղաղութիւնն Աստուծոյ նախախնամութենէն եղև, որ ազատեցաւ ազգս Հայոց երկուց կողմանց գաղանացն։ զի այն կողմն ընակիչք երկրին ամենայն Հայք էին և են, և այս կողմս ամենեքեան Հայք։ զի Մուստաֆա վաղերն այն բարի անուն ժառանգեաց, և այս կողմանց բերդոցէնց պահապանքն ըստ իւրեանց յաջող ժամուն ելանէին ամենայն տարի բազում զօրք և գնացեալ երկիրն Երևանայ, Զօրայ, Լօռու և Բամբակաձորու ասպատակէին, երէին և աւերէին, մեծամեծն ի սուր քաշէին, զկին և զողայն գերի բերէին։ Նմանապէս Պարսիկքն քան զոսոս չարք և անողորմք և բարբարոք ամենայն կողմանց ելանէին գաղտագողի ասպատակէին, Կարսայ և Անու երկիրն, Վանայ ծովային ամենայն մինչև ի դաշտն Մշու և Խնուսայ գերէին և աւերէին, զկին և զողայն գերի տանէին և զմեծամեծն ի սուր սուսերի

մաշեցուցանէին, զի այնպէս անապատ արարին այս սահմանք երկիրներս որ Արզրումայ հետ մինչև Երէվան միայն բերդարայքն ի շէն մնացին 12։

Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց. զի ով կարէ ընդ գրով արկանել, բայց Ստեղծողին միայն է յայտնի, որ գիտէ զամենայն։ Ապա յարոյց Աստուած ի ժամանակին այնմիկ հոգիբնակալ երեցս երանելի դերազանց Մովսէս կաթուղիկոսն Ռ.Հ.Թ. թվին. զի ամենայն դօրավարաւորաց հարկ դնէր, որ զգերեալսն ազատէին. զի ինքն ևս իւր ընչիցն տայր և ազատէր ամենեքումբք. երեք չորս հազար գերի աւել Երէվան և ի Թարվէզ և այլ գիւղաքաղաքսն ազատէին և առաքէին յաշխարհն իւրեանց, զի այն ժամանակն ազգս Հայոց վաճառականաց յոյժ ընչասէրք և վարթամք էին յայլ կողմն և յայն կողմն, վասնորոյ նոյն Սանոս զէլէպին և քաղաքի գոլլաթաւորքն և վաճառականքն անչափ գերիս ազատէին և առաքէին ի տեղիս իւրեանց, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Իսկ ելշանն այն Սանոս, եկեղեցի մի կայր ի մէջ բերդին, որ տուն և սարայը էր Տաճկի միոջ, առեալ գրամով զտուն հանդերձ եկեղեցեաւն և ետ Հայոց. և ի հատանել Ռ.ՁՁ. թվին քանդեալ աւերեցին զսարայսն մեծ և փոքր քահանայք և ժողովուրդք ջերմ

սիրով շինեցին մեծ փայտեայ ժամատուն, և քաղաքամ գրամս մոխեցին ի գրուանս փաշանեցացն. և լինէր յարաժամ փառաբանութիւն Աստուծոյ սաղմոսերգութեամբ և պատարագօք։ Իսկ ի հատանել Ռ.Ճ. թվականին Հայոց եկն երկրէն Վանայ մօլլայ մի Վանի անուն ճարտասան և յոյժ հմուտ գուռանին և քարոզող նոցին. եկն ի քաղաքս Արզրում և էլ համբաւ նորա ընդ ամենայն երկիրս Տաճկաց. և էր յոյժ կեղծաւոր անընչութեամբ, ոչինչ առնելով ումեքէ ըստ նմանութեանն կախարդին Սիմոնի և նաքրովի. և եղեալ շնորհս առաջի փաշանեցաց, մինչ որ լմացեալ վէղերն և տարաւ Ստամպօլ և յոյժ մեծացոյց և արար խորհրդակից թագաւորին և օր ըստ օրէ ելից չար խորհրդով. և օձապատիս լեզուաւն իւրով հաւանեցոյց միտս վէղերին և արքային, որ ետուն ոստակի հրաման Ռ.ՃԺ.Ա. թվին ի մէջ Ստամպօլայ, որ մինչև տան եկեղեցի Հոռոմոց և Հայոց քանդեալ աւերեցին, և ի գլուխս ամենայն քրիստոնէից Ստամպօլայ մինչև ի Թօխաթ և ի Սեբաստիոյ վնճակն սև գտակ հագուցին, և փակեցն եառան արարին։ Եւ մօլլայս այս յամբ էառ թագաւորէն և առաքեաց ի վերայ փաշային Արզրումայ, և առին զեկեղեցին, որ ի մէջ բերդին անուն սրբոյն Սահմանոսի, և արարին մզկիթ.

և եղև ուրդ մեծ աղգիս Հայոց, որ մնաց մէկ եկեղեցի պարսպէն ի դուրս անուն որբոյն Աստուածածնայ, զոր հիմնարկեալ է Մեսրոպայ վարդապետէն և շինեալ է ձեռամբ Դաւթի Անյաղթին և Մովսէսի Քեռթողին, և առաջմանէ հռչակաւոր վանք լեալ է քաղաքիս ի ժամանակս մեծ կայսերն Կոստանդնուպօլսի Փոքրուն Թէոդոսի. որ դպրոց է եղեալ և միաբանակեցաց տեղիք, որ այժմ Միաբան Սուրբ Աստուածածին կոչեն։ Եւ ի մէջոյ բերդի եղեալ քրիստոնեայքն և քահանայքն ամենայն մնան մինչև ի ծաղել արևուն, յորժամ դրերդի դուռն բանան, ապա դիմեալ դան յեկեղեցին, և աղօթեմք ի միասին. և եմք երեսուն քահանայ եղբայրք սերով առ իրարս, ամենեքեան դրադիրք և ծաղկարարք, ժամասացք և ճարտասանք, հմուտք հին և նոր կտակարանաց, զի ամենայն օր ՃԾ. փոխ սաղմոսն վճարի անխափան, ժամ և պատարագ մատչի, սարկաւագունք բաղումք վարիկածայնք և երգողք դոյն ղդոյն եղանակք երաժշտական երգոց և տուրմարական արհեստից, պարկեշտ գնացիւք և քաղաքավարութեամբ ի լի. անդադար կան ի փառաբանութիւնս Աստուծոյ, զոր Տէր Յիսուս հաստատուն և անդրդուելի պահեսցէ ամէն։ Եւ դուռն բերդին այն, որ ընդ հիւսիս հայի,

Կանայ և Վրաստան դուռն կոչեն, որ զարմանալի խաչեր կան դրօշմեալ ի պարիսպն, հիանալի տեսողացն, և ի վերայ մէջի դրանն սեմոցն դրօշմեալ կայ որբոյն Սարգսի պատկերն նիզակ ի ձեռին և հեծեալ երիվար առ ի պահպանութիւն քաղաքիս։ Եւ պարսպէն դուրս չորս կողմն շինութիւնք բաղում, և կան ընակեալ մինչ ի քառասուն հազար տուն մարդիկք խսպահիք և ենկիչարիք յոյժ ընչասէրք, բայց յազգէս Հայոց երկու հազար տուն հաղիւ թէ գտանի. և վաճառականք ի չորից կողմանց Հայոց աղգէս անթիւ կան նստեալ տարին բոլոր բովանդակ ի գնել և ի ծախել փառչայ և ապրշումեղէն, ցեղ ու ցեղ զումաշ և զանաւուշ, չուխայ, կտաւեղէն և քթան, անթիւ և բազում ջավահիր քար՝ ալմաստ և յեսպուիթ, զըմրուիթ, լալ. սամուր և վարշակ և ամենայն մաղեղէն տարին բոլոր յայտնի գնեն և վաճառեն. զի այժմ քաղաքս այս յոյժ բանտար է նման Սատամպօլայ, որ տարին ԺՌ. բեռ մատնէ և ելանէ, որ ՃՌ. զուռուշ մատնէ քսակն փառշային, թոզ զիւր թեմն և տարերու Քրդերուն գելուրն, այս ամենայն գալօղ և գնացող վաճառականացն։

Եւ բերդս այս շինեալ կայ բարձրանիստ տեղիս ի թաղաւորական դահոյք նստեալ առ

ստորոտով բարձը լերին, որ Շողալաբ և Գոհա-
նամ 15 կոչին, և հայի ի վերայ բոլորաձև խոտալի
և Ջրաւէտ դաշտին և դեղեցկաշէն գիւղօրէից
իւրոց և առաւել ի վերայ օրհնեալ գիւղին Կա-
նայ. որ անդ բնակեալ կան երեքհարիւր տուն
Հայք, և ունին դեղեցկաշէն եկեղեցի մի, անուն
սրբոյ կուսին Վառվառեայ կառուցեալ. որ
տապաստ և ծաղիկեալ տեղեաքն տանին ի դուռն,
առ ժամայն չորանայ և աղատի շնորհօքն Քրիս-
տոսի և սուրբ կուսին Վառվառեայ. և կան
քահանայք տասն և սարկաւագունք յարաժամ
փառաբանութիւն Աստուծոյ: Եւ ունի գիւղս
այս և դաշտս սեաւս և պտղաբեր հողս. որ
գարի և ցորեան և կտաւատ բաղում լինի. որ
բոլոր շրջակայ գաւառներն ոռքա լնուն ձիթով,
որ տասներկու նուկի ձէթն երկու դրամ ար-
ծաթոյ կուտան: Եւ լինի գիւղս այս գոմէշ մեծ
և անճոռնի, և դեղեցիկ եղինք ախորժք տեսո-
ղացն, և է այժմ շրջակայ գիւղքն և գաւառքս
ամենայն Հայաստան և ողորմութեամբն Աստու-
ծոյ քան զամենայն երկիր հանդարտ և խա-
ղաղութիւն, առատուր բաղում յոյժ, լնու-
թիւն հացի, մսի, եղի, տունք և ապարանք
շինուածք ամենայն որպէս Տաճկի հանդերձ և
կանացի զարդեր, ոսկեղէնք և ապրշմեղէնք, որ-
չափ և կարեւ, ի գլուխս տղայոցն և արանցն

ամենայն գօտի զարով և փաթանի հագեստն
ամենայն արանց աթլաս և ծիրանի չուխայ աղդ
և աղդ, ի բաղնիսն Հայ և Թուրք ի միասին և
անտարտունջ, լաւ և խելացի դատկան հողագործ
և վիշաբաբ, ամենայն ժուռ գալող մարդ, որ
իւր թագաւորական հարկն և խարաճն որ տայ
փաշային, այլ կարող չէ ուրիշ Տաճիկ վատ
խօսք ասել կամ ձեռն դնել ի վերայ Հայի. ա-
մենայն կողմանէ բարութեամբ ի լի է. ծառոց
պտուղն՝ խնձոր և տանձ և խաղող շուկաներն
ի լի մինչև ի Հայոց զատկին. ձիթապտուղ, շա-
պալութ, կաղին և չամիչ անթիւ, արմաւ և
նուշ ի բոլոր տարին. իսկ ի մտանել աշնան ե-
զանակին ի նոյեմբերի Ը. յորժամ արեգակն ի
ծովն մտանէ, օր ըստ օրէ սաստկանայ ցուրտն
և սկսանի գալ ձիւն բաղում, մինչև ի դեկտեմ-
բերի ԺԸ. դարձի արեգականն պաղի դետինն,
և Ջուրք ամենայն սառտիկ, և լինի շամանդաղ,
որ է մուայլ. որ վրքը մի հեռուստ աչք ոչ կարէ
տեսանել դմարդ. և թէ մէկ վառք սաղմոսի
չափ և կամ աւել ուրեք գնայ մարդ, հեր
դլխոյն և մաղ մօրուացն սպիտակք և սկեսերն
որպէս ոչխարի յեռք լուլայ կախեալ լինի. ապա
ի բերմանց աստեղայ և տանուտէրայ տարի
կայ, որ քաղցր օդով և անձիւն անցուցանէ ձը-
մեռն. իսկ յորժամ հասարակ լինի և արեգանն

ի խոյն մտանէ, կակղանայ երկիր և հարաւ հողմով հալէ զամենայն ձիւնն. և ի մտանել ապրիլ ամիսն ցանեն պարտէզ, գարի և ցորեան անթիւ. և այս ամսոյ նոր յեսուիրաղ խաղողին դայ ի քաղաքս, և ձուկ բաղում կարմրախայտ ադդ և ադդ՝ հօխան մէկ ատակ, և զանազան երամս հաւուց և թռչնոց ճուվոդականաց ընդ երեսս դաշտին սփռեալ լինին երամագնացիւք, և բաղումք ի ձուոցն և ի հաւուցն կերակրեալ լինին. իսկ ի մտանել մայիս ամսոյն կանանչացեալ սաղարթախիթ դրախտաստարաս կանանչանայ սար և ձոր, պտղաբեր ծառք ծաղկեալ վիթթին, և լերինքն հանեն ծաղկունք անուշահոտք և դոյն դդոյն ցեղ, պիտանիք դեղոց և օգտակարք ուչաց և ցաւոց շուշան վայրենի և ծաղիկ անթառամ, դեղեցիկ թութիայ և լալայ, լօշտակ, ադդ և ադդ բանջար, ցեղ ու ցեղ մանուշակ. որ դան բժիշկք ի Պարսից և ժողովեն զոմանց զդլուխն և զոմանց զտակիվին, տանին ի պէտս զեղոց: Նմանապէս ի գլուխս լերանց խոտ, և աղբերակունք անթիւ սառն և բարեհամ, և ի չորս կողմն քաղաքին յեայլանի ջրդաց և գիւղօրէից, և ջրիք հօտից և ուչխարաց և անասնոց և վայրի երէք և եղունք բաղում սփռեալ կան ի ձորս և ի գլուխս լերանց՝ որսողք նոցա ի մոց կերակրեալ լինին. իսկ ի

հասանել մայիսի քսան և հինգն դայ բալ և տանձ, խնձոր և ծիրան ի պարտիզաց: Եւ ի հասանել դարձի արեգականն յունիսի ԺԹ. ամենայն պտուղք ծառոց բաղում դայ ի Վրաստանայ: Եւ ի մտանել յուլիսն յոյժ շողանայ երկիր և լինի ազնիւ ամառ, ուր և կամիս նընջեա՛ ի գիշերի և ի տունջեան, ոչ ահ օձից և ոչ երկիւղ կարձաց, ոչ ջերմ դող և կամ այտումն, այլ ի սիկ հանդարտ մեղմով: Եւ բնակիչք երկրիս մարդիկք հսկայազունք և կարմիր երեսք, աչք և կանայք պնդակազմ առոյգ մարմնով. յոյժ առողջարար և սնուցիչ է մարդկան ջուր և հող երկրիս: Եւ ի մտանել օգոստոս ամիսն հնձեն գարի և ցորեան, և դայ խաղող անթիւ. ձմերուկ և խիար հասանի քաղաքս, որ յար և նման ուրեք ոչ լինի անուշ և պաղ խիար. պարտիզաց սաւղիք քան զխոտ աժան, զի այնպէս բաղուկ լինի ոպիտակ, որպէս ձիւն, և թղաչափ մի լայն, բոզկ և շաղկամ պարարտ և խոշոր, այնպէս որ մէկին չորս հօխայ կշռոյ դայ. որ հիացեալ տեսողքն փառս տան Աստուծոյ: Եւ ի մտանել աշնանն սեպտեմբերի ԺԸ. ժողովեն արդիւնս զամենայն ի շտեմարանս: Եւ է երկիրս այս յոյժ լիութիւն հացի, մսի, եղի և գինւոյ, փայտ, աղ և մեղր անասելի և անպատմելի, զի Կ. ոսք երկայն փայտն և գրիա-

չափ լայն և հաստ փիճի փայտն մէկ զուռուշ, որ մինչև ի ծայրն ոստ չկայ. որ ի տեսանելն մարդ հիանայ և ապուշ մնայ. դառնն մէկ ռուպի, ոչխարն երկու զուռուշ, կովն վեց ռուպի կամ ութն ռուպի, ձի և եղն, էշն նոյն գնով, եղ և մեղը կէս կէս զուռուշ մէկ լիտրն, գինի անթիւ, և սոքա անպակաս տարին ի բոլոր. և այսպէս այլն ամենայն իմաստիս, հանճարեղ և պատուական եղբարդ իմ, զի թէ գտաւ ինչ ի սմա ըստ հաճոյից ձերոց կամաց Տեառն է շնորհք և ի Տեառնէ գոհացարուք, և թէ ոչ, նեղումն հայցեմ յանցանաց իմոց:

* * *

Եւ ունի քաղաքս և երկիրս այս աթոռ երեք, որոց առաջին և գլուխ է քաղաքիս աթոռ սուրբ Լուսաւորչի վանքն որ Մուտուռկու 14 վանք ասեն, որ է այժմ միաբանակեցաց տեղիք: Ի Թվականիս մերոյ ՌՂԷ. եկն Բոտամպօլցի Սարգիս վարդապետն սուրբ Էջմիածնայ նուիրակ, որ անդ էր վարժեալ և ունէր ձայն ահեղ և անուշ. որ և հաւանեցոյց զքաղաքս և երկիրս ճարտար քարոզութեամբն իւրով. և եպիսկոպոսն Ղազար իւրովի կամօքն հրաժարեցաւ և ետ ի նա զվանքն. և նա զարձաւ առ կաթուղիկոսն Փիլիպպոս և էառ հրաման նստիլ մեծագահ աթոռն Թէոդուպօլսի. և եկեալ արար բաղում շինք և շինուածք ձեռնտուութեամբ քաղաքիս և վաճառականացն, և յոյժ աշխատութեամբ եբեր ջուր և եհան ի դուռն վանացն աղբիւր և ջաղացք, և այլ ուղղութիւնս և կարգս արար ի վանքն, զոր Տէր Աստուածն պահեսցէ հաստատուն մինչև ի կէտ կոչմանն իւրոյ ամէն:

Եւ միւս վանքն է Հնձուց վանքն, յորոց և յիշատակէ Մովսէս Խորենացին. զոր հիմնարկեալ է Մեծին Ներսէսէ կաթուղիկոսէ, որ թոռն թոռ էր սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին. զի յորժամ թագաւորն Հայոց Արշակ առաքեաց զՆերսէս իշխանաւք և բաղում զօրաւք ի Կեսարիայ և եկեալ գնացին անդ. և սուրբ հայրապետն Սեբի տեսեալ գհրաշագեղն Ներսէս և փառաւոր իշխանք ընդ նմա, յոյժ ուրախացաւ և պատրաստեաց ձեռնադրել զՆերսէս կաթուղիկոս Հայոց ընդ նմին և Բարսեղ Ղայսաբեցին. զի յորժամ զօծումն սուրբ ընկալան, նոյն ժամայն յայտնապէս Հոգին Սուրբ Աստուած էջ ի վերայ նորա այսինքն սրբոյն Ներսէսի և Բարսղի, որ ակներև ամենեքեան տեսին երկոցունցն արժանաւորութիւնն և հիացեալ փառաւորեցուն Աստուծոյ, որ այնպէս առաջնորդ ու-

նին սրբազան աղդն Հայոց. և առեալ զսուրբ
Ներսէս Լշխանաբն ամենայն զօրաբ յոյժ ուրա-
խութեամբ աշխարհս Հայոց մտին. և ամենայն
քաղաք ընդդէմ նոցա երթային. ուր և հանդի-
պէր հիմնարկէր եկեղեցիս, կարգէր քահանայս
պետս և ձեռնադրէր եպիսկոպոսս, և շինէր
ի վերայ ճանապարհին հոգետունս: Եւ եկեալ
Էանց ի գաւառն Դերջանայ և հասեալ ի մօ-
դաշտին Կարնոյ, լուաւ քաղաքապետն զգալ
Լշխանացն և սուրբ հայրապետին, եկ ընդ ա-
ռաջ նոցա բաղում պատրաստութեամբ և զօ-
րաբ և տարեալ եմոյծ ի բերդն Արզրումայ, ո-
էր փոքրիկ, զոր յետոյ հրամանաւ Փոքրուն Թէ-
ոդոսի շինեցին և մեծացուցին: Եւ արար սէր ի
ընդունելութիւն սուրբ հայրապետին և պար-
գևս բաղումս ետ նմա. և նոյն ժամայն եկ
սուրբ բարձրաւանդակ տեղին և խաչակնքեա-
վերկական սուրբ նշանաւն, որ ունէր ընդ ին-
քեան, օրհնեաց զքաղաքն և զերկիրն և զնշանեցեա,
խանս և ընակիչքն ամենայն: Եւ եկեալ սուրբ
հայրապետն հանդերձ Լշխանաբն և զօրաբն ամե-
նայն և գնացեալ հասին ի գիւղն Ենձուց դէպ
արևելս կոյս ի բարձրավանդակ տեղին և անդ
ընակեալ նստան. զի զէմ եղեալ էր սուրբ հայ-
բապետն գնալ յաթոռն Լուսաւորչի Գրիգորաշէ-
որ ասի Էջմիածին: Եւ ի գիշերին այնմիկ տե-

սիլ զարմանալի Լուսոյ սուրբ Ներսէս յայտնա-
պէս, որ սուրբ Աստուածածնին նստեալ զէմ
յանդիման վիմին ծիրանազդեստ փայլակնա-
ցայտ, և հրեշտակք պարունակեալ ունէին զնա
և եղանակէին ասելով. Դու ես հարսն անարատ
Հօրն երկնաւորի, որ և մեք սարսեալ զողամբ:
Եւ ընդ լուսանալ առաւօտուն հրամայեաց զօ-
բացն քարինս բերել և էարկ հիմն եկեղեցւոյ
ի նոյն տեղին, յոր եղեալ նստեալ զսուրբ կոյսն
ի վերայ վիմին. որ է մինչև ցայսօր հռչակաւոր
և մինաբանտկեցաց տեղիք, որ այժմ Կարմիր
վանք կոչի. և ունի ձորն անապատ կուսանացն
և ճգնաւորացն և բարեհամ աղբիւրն և վայե-
լուչ վայրքն, որ Հռիփսիմեանց կոչեցաւ, որ է
մինչև ցայսօր:

Եւ միւս վանքն է ի կողմն հիւսիսոյ, որ
յանուն սուրբ խաչին է շինեալ և կառուցեալ.
զոր փոքր ի շատէ ծանուցից քեզ. և թէ խա-
չասիայտին զբովանդակ պատմութիւնն հարցա-
քեան, օրհնեաց զքաղաքն և զերկիրն և զնշանեցեա,
խանս և ընակիչքն ամենայն: Եւ եկեալ սուրբ
հայրապետն հանդերձ Լշխանաբն և զօրաբն ամե-
նայն և գնացեալ հասին ի գիւղն Ենձուց դէպ
արևելս կոյս ի բարձրավանդակ տեղին և անդ
ընակեալ նստան. զի զէմ եղեալ էր սուրբ հայ-
բապետն գնալ յաթոռն Լուսաւորչի Գրիգորաշէ-
որ ասի Էջմիածին: Եւ ի գիշերին այնմիկ տե-

*) Կրկնութիւն է Սեբէոսի եւ ուրիշների հաղորդած
Դանօր պատմութեան, որը չարտագրուեցաւ:

Այսուհետև սկիզբն արարողութիւն և գետոցն զի քաղաքս և լերունքն բարձր են քան զամենայն երկիր. իբրև զշատրուան ընդլեն զանազան ակունք ի չորս կողմանց լերանց. և լինի չորս գետ. և ընթանան ի չորս կողմն աշխարհս: Առաջինն է գլուխ, որ ելանէ արևելեայ կողմանէ, որ Վրաստանպօղազ կոչեն, ի Ծագ կաւէտ 15 լեռնէն մասն Եփրատայ, զոր Աստուածաշունչն գրէ անդաստ ի դրախտին ելեալ սա, որ արևելից ելեալ ուղղղ դէպ ի հարաւ ընթանայ. իսկ Մովսէս Խորենացին ասէ թէ ելեալ ակն է Եփրատայ. մինն ի Կարնոյ ելանէ մեծն Աղաշիերտոյ, բայց գնացեալ երկոքին խառնին յիրար և լինի Եփրատ մի գետ: Նա Թուլիուրանցին 16, որ զԱրարատոյ գիրքն ասեն հանել է տաղիւ, յիշատակէ ասելով, թէ Եփրատ ի Կարնոյ ելանէ ի Ծաղկաղարդ տեղիս ուր Ոսկեանքն զՍուքիասեանքն մկրտեցին. և մկրտելն զմիմեանս փութացուցանէին, զի մի կրտեալքն զՔրիստոս տեսանէին և աւետիք տային միմեանց. անդ և խաչ կանգնեցին Աւետեաց ի գլուխ ձորակին, որ կայ ի վերայ վերին զբօշմած մինչև ցայսօր ի յակունս Եփրատայ. որ ստուգիւ ասա են մկրտեալ. որ բաղում անգամ ուխտաւորք և մեք և Փիլիպպոս Կաթուղիկոսն 17 գնացեալ բաղում վարդապետք. և անդ բանակ եհար ի վերայ Աւետեաց խաչին և արար պատարագ: Եւ անտի ելանեն զանազան և բարեհամ ակունք և խառնին ընդ յիրար, նա ևս Խաչափայտի Ջուրն ևս խառնի ընդ սա և գետանայ և գնացեալ առաջի Հընձուց վանիցն և լինի գետ մեծ. և իջեալ ի մէջ դաշտին դէմ յանդիման բերթին Կարնոյ ճաշոյ մի գնացք, և ծովանայ հանդարտ գնացիւք և լինի շամպ, խոտ և եղէգ յոյժ և մօրայ, որ է ցեղ, հաւուց և թռչնոց տեղի ապաստան: Եւ գնացեալ հասանէ ի գիւղն Ծրագ և Ջերմուկ. և դայ Ջուր Ցրտաձորոյն և բլրոյն, խառնի և լինի գետ մեծ ի մէջ դաշտին անհուն և ձայն արձակեալ գնայ ի ձորն Ճինիշու: Եւ ի հիւսիսային կողմանէ լերանցն վիրը գաւառէն Ոլաճուղու, որ է ի մէջ մայրեացն, ելանեն բազում ակունք. և լինի գետ սուր և ախորան, և մտանէ անհուն ձորն Ծիրանայ և Սառչամու, և հասանէ ի գիւղն Մասուր, և խառնի ընդ յառաջ Գաղտառիճու կարմնջին ընդ Եփրատայ, և մտանէ ի ձորն Շողենու, և գնացեալ հասանէ ի Դերջան ի գիւղն Բաղառիճն և Կոթեր: Եւ դայ Ջուրն Լակզոյ Խորձունեացն և Կեղոյ և Մինանայ. և լինի Եփրատս ծով. և անտի ոլորտս տալով, գնացեալ հասանէ Եղնկայ և կտրեալ ընդ մէջ դաշտին ի չորս կողմանցն, բաղում

ջուրը խառնին ընդ նմա. և գնացեալ հասանէ
ի բերդն Կամախ և մտեալ քարաձորն Անկեայ և
Արապկերու, և անտի հասանէ ի դաւառն Զը-
մշկայ ի գլուխն Մալաթիոյ: Եւ միւս ակն, որ
ելանէ ի Տիատին բերդէն ի գլուխս դաշտին Ա-
լաշկերտու, բաղումք ակունք յորդառատ, և
խառնին ընդ յիրար և գետանան, և գնացեալ
ի մէջ դաշտին խառնին ջուրքն բաղումք, և լինի
գետ մեծ, որոյ անուն Մուրատ ձայնեն: Եւ
անտի գնացեալ հասանէ ի դաշտն Մանազկերտու և ընդ ստորոտովն Խնուսու, և մտանեն
բաղումք գետք. և գնացեալ հասանէ ի դաշտն
Տարօնոյ առաջոյ վանիցն սրբոյ Կարապետին և
մտեալ ի ձորամէջս առաջս ամուրս բերդին Ողկանայ, ուր սուրբն Գրիգոր Լուսաւորիչն ամբանայր, և ոլորտս անցանէ ընդ դաւառն Ճապղջոյ. և հասեալ ի բերդն Բալու և լինի Մուրատս անտանելի գետ, և շրջեալ եկանէ զնեբ-
քին կողմանքն Խարբերթու դաշտին և գնացեալ
հասանէ և սա ի գլուխն Մալաթիոյ. և միանան
ընդ յիրար երկու յակունքս և լինի Եփրատս
մեծ ծով, որ Արապկի բաւով Ֆրատ ասեն դե-
տոյս: Եւ գնացեալ մտանէ ի ձորն Ապտէհերու
և հասեալ ի բերդն հայրապետին մերոյ Ներսէ-
սի, որ կայ յորջորջի, և շրջապատեալ զբերդն,
գնացեալ հասանէ ի Բորատուկ, որ նաւք գնան

ի վերայ. և այնուհետև անկանի ի մէջ դաշտին
և հանդարտ գնացեալ բաղում չօլս և անապատս անցանէ. զի ոչ ամի վայրի Քուրդ և Ա-
բասպի դիւղք և շինուածք կան, առ եղերքն գետոյս են բնակեալք, որ ամենեքին ձիւն չեն տեսանել: Եւ գնացեալ հասանէ յանդիման Պաղտատայ ի բերդն Զուռնայ ի սահմանս Հիլլայու, և անտի խաղացեալ Ե. աւուրք յառաջ,
և գայ Դիկլատ գետն Բաբելոնի, որ է Շատն,
զոր Աստուածաշունչն գետոյս Տիգրիս կոչէ. և
խառնին ընդ յիրար Եփրատս և Տիգրիսս և
միաւորեալ գնան ի Բասրայ քաղաքն. և մտանէ
ի ծովն Հնդկայ, որ է Սպիտակ. զի եմաստասէրն Արիստոտել ասէ. զի Սպիտակ ծովս է շրջապատեալ ի Դ. կողմն աշխարհիս. զի Դ. գետք ի դրախտէն ելանեն. երիւք
ոչոք են՝ Տիգրիս և Եփրատէս, որ Հայոց երկրէն ելանեն և գնացեալ ընդ իրար միանան.
զի բուն երկիրն Ասորոյ ի մէջ երիւց գետոցս
են բնակեալ իբր կղզի. վասն այսորիկ գիրք ա-
մենայն Միջագետաց Ասորոյ ասեն. զի Տիգրիս
Հաշտէն գաւառէն ելանէ և գնացեալ յԱմիթ,
ի Մուսուլ և ի Պաղատատ և խառնի ընդ Եփրատին, որպէս ի վերոյ գրեցաք: Եւ Գրիգորոսի
փառք յաւիտեանս ամէն:

Այսուհետև վերջ արասցուք Եվրատին և սկիզբն արասցուք միւս դետոցն, որ բղխեալ ելանեն ի հարաւային կողմանց բարձրաբերձ լերանց ի Բինգոլէ Հազար Ականց 18 սկիզբն ի Շուղալարայ, և խառնեալ ընդ երար դետանայ և գայ մտանէ ի ձորն Թէքմանու և լինի Արազ: Եւ սկսանի գնալ ուղիղ դէպի արևելս և հասեալ ի դաշտն Բասենու, գնացեալ ի Զօպանի կամուրջն. և գայ Վերին Բասենու ջուրն և խառնի ի մէջ կամրջին. և լինի Արազս դետ մեծ և անհուն: Եւ գնացեալ մտանէ ի Վիշապաձորն Կաղզվանայ. և հասեալ Աղճաղալան, և դեան գայ Ղարսայ և յԱնոյ, որ է Ախօրան, և խառնի ընդ Արազս, և ուղղաս տալով, գնացեալ հասանէ երկիրն Երէվանայ և Դվնայ և ընդ ստորոտովն մեծին Մասիսոյ. և դան ջուրք Այրարատեան դաւառացն և խառնին ընդ Արազն և ծովանայ. և կորեալ գնեալքին կողմն Այրարատեան դաշտ և գնացեալ հասանէ ի գիւղաքաղաքն Աստապատ և Ջուղայ, որ նաւորդք գնան ի վերայ. և անտի մտեալ ի խորաձորս բաղում աւուրքք, և խառնին ջուրք բաղումք. և գնացեալ հասանէ երկիրն Շրվանայ ի Դարբանտն, որ է Շամախի, և միանայ ընդ Կուր գետին և մտանէ ի ծով Կասբիական, որ է Կիլանն:

Եւ միւս գետն ձորոս ելանէ ի հիւսիսոյ լերանց քաղաքիս ի թաւ մայրեաց միջոյ ի դաւառէն Զորմարոյ և դիմեալ դայ ուղիղ դէպ ի հիւսիս. ելանեն ակունք բաղումք և գանազան և յառաջացեալ խառնին ընդ յիրար և դետանան և լցանէ ի ձորն Մատատարու. և գնացեալ հասանէ ի քաղաքն Բաբերթ և ճեղքեալ յերկուս բաժանէ զշինուածք. և շրջեալ զբերդն անցանէ ընդ մէջ դաշտին. և դան ջուրք ի չորեց կողմանց և խառնին ընդ սա. և լինի ձորոս մեծ և անհուն. և մտեալ ի ձորս խոր Ռսպերու և հասանէ ընդ առաջ սուրբ Յովհաննէսու վանիցն, որ կայ անդ ամփոփեալ զՏկոյթ սրբոյն Յովհաննու Կարապետին. և անտի առաջ խաղացեալ հասանէ ի բերդն Ռսպերու և Ագրակ. և գնացեալ ի բաղում աւուրս ի մէջ անտանելի ձորոյն, հասանէ ի քաղաքն Վրաց Արդվին, որ ձիթապտուղ լի և անթիւ լինի. և ի մէջ ձորոյն առ ոտին գետոյս երկու կողմն բովանդակ գիւղք և աւանք, այգիք և ծառոց պտուղք մինչ ցեղը ծովուն անպատմելի և անթուելի: Եւ գետաք յոլով դան ի Թորթոմու, Իշխանայ, յՕխտեացն և Փանակու և միանան ընդ ձորոսիս. և հասեալ ի բերդն Գոնեայ առ յաւին Սև ծովուն և մտանէ անդ:

Եւ միւս գետն յառաջացեալ արևմտից

լեռանց Երկրէս և գլխաւոր գնայ ուղիղ արևմուտս կոյս, որ Գայլ գետ ասեն սորա։ զի է Գայլ գետու երանեն անթիւ ակունքս։ ի գեղջէն Կարմրոյ լերանցն ժողովեալ մտանեն ընդ ձորն և լինին գետ սաւբ և զարհուրելի։ և գնացեալ հասանէ ի Մուրատ Գալասին։ և անտի Նիկեոսաբ քաղաքն, զի անտի էր սուրբ հայրապետն Գրիգոր Նիւսացին։ Եւ Ջուրք բազումք մտանեն ընդ սա, և մտեալ ընդ Խորանոս և անցանէ ընդ բազում գաւառս Հռոմոց և հասեալ ի Սև ծովն և մտանէ անդ։ Զի նշխանն Վարդապատիկ ի վերայ գետոյս այս խոյս առեալ և կամուրջն ետ ընկենուլ ի գետն և ինքն էանց։ և զօրքն Հռոմոց վախճատական գլխեալ ի կամուրջն ոչ գտին։ և Տաճկացն զհետ մտեալ զորն կատարեցին, և կէաք Ջրասոյզ արարին հաղարս և բիւրս։ Ոչ թէ Վարդապատիկն ի գուբ արար, զի առաջմանէ չարաճճիկ էին ազգն Հռոմոց, բազում նեղութիւնս հասուցին ազգիս Հայոց և նշխանին, վիրաւորեալ էին ի ձեռս նոցա և ի դեպող ժամու հայէին, որպէս ասա գոյն գործեալ հասուցին չար։ Նորա համար Հռոմքն շուն երմանի ասեն։ բայց արարմունք երկոցունցն ոչ էր համելի Աստուծոյ։ Ապա Ներոպաւթեամբն Աստուծոյ թագաւորեաց Մահմէտ և

Եհան զտին քրիստոնէից։ Զոր Տէր Աստուած փրկեալ ազատեսցէ զմեզ ի ձեռանէ սոցա։

Այսքան վասն գետոյն, որ երանեն Արզրումոյ լերանցն և որպիսի ճանապարհս և որքան աւուրքք մտանեն ընդ ծովերն որիշ որիշ պատմեցից քեզ կարդաս, իմաստուն եղբայր։ զայս քան զնիրատն երկար ճանապարհ ոչ որ ունի։ որն քան կամ երեսուն կամ քառասուն աւուրքք մտանեն ի ծովն։ բայց Նիրատն երեք ամսէն ճանապարհս ապա թէ մտանէ ի ծովն։ Բայց գիտեմ, զի պատմութիւնս պարարաելի է իմաստնոց։ բայց խնդրեմ ազատ առնել զմեզ ի բամբասանաց և կամ զթերին լրնուլ։ քանզի յոյժ խնդրեաց հարազատ եղբայրն իմ Մաղաքիայ և քահանայքն և սարկաւարդունքն մեր յոյժ թախանձեցին և ես զկնդիրս նոցա կատարեցի բարեխօսութեամբ սուրբ կուսին Տալիթայ, և Ամիորդոյն։ նման Լուսաւորչին մերոյ և ամենայն սրբոցն ամէն։

***

Դարձեալ պատմութիւնս այս ի վերայ Կարնոյ քաղաքին Մինասն սուրբ Աստուածածնի

եկեղեցոյս է. զորոյ հրաշս և պատմութիւնս և զօրութեան շնորհս ի մարդկիկք յարադահաս բազմաց հասեալ է. որոց և մինն ի բազմաց ասացուք փաքր ի շատէ, զորս տեսաք աչօք մեր: Յաւուրս իշխանութեանն Տաճկաց ի մեծ ինքնակալ կայսերին Սուլթանն Մահմետին, որ տիրեալ է մինչև ի Կարս և զԿաղզվան, յունիս ամսոյ Ի. սուրբ Լուսաւորչի պահոցն, հինգշաբթի երեկոյին ի մէջ գիշերին կատարեցաւ բան Փրկչին ի վերայ մկի, որ ասէ. Ագթուն կացէք, զի ոչ գիտէք թէ յորում ժամու դոցն ձեր դայցէ, յերեկոյն թէ ի մէջ գիշերի, կամ հաւախօսի, դուցէ եկեալ յանկարծակի դտանիցէ զձեզ ի քուն. բացեալ էին եկեղեցին մեր ի դերեզմանաց կուսէն, զփանճարէն քակեալ էին և մտեալ ի կանանց չարտաղն, և ի մէջ եկեղեցուն. և կայրն այն գիշերն հինգ ոգի ի մէջ ժամատանն քնած. ոչ ոք արթուն չէ եղեալ. մինչ որ մէկ երկուսն եարալի են արարեալ. գիմեալ ի տաճարն կոպզայքն կոտրեալ էին. և բազում անօթս տարեալ էին թէ կաչ թէ սկիհ թէ արծաթէ բուրվառ, աւետարան, շուրջառ. մինչ նոքա զայս ժողովեալ էին, մինն ի վանականացն եկեղեցուն գաղտագողի դուրս էր փախեալ և ձայն արձակեալ ի մէջ թաղին. և գողքն այնոքիկ ի յա-

հէ ձայնին մաղապուրծ փախեալ էին նոյն ճանապարհաւն ընդ որ եկեալ էին. իսկ ընդ լուսանալ առաւօտուն եկն դուժկան աղաղակն առ աւագ երէց Տէր Գէորգն և ասացին թէ գիշերս այսպիսի չար պատահմունք եկն ի վերայ մեր: Եւ եկեալ վաղվաղակի գնացաք որ մարդիկքն արիւնաշաղախ անկեալ կան և զգեստքն ամենայն տարեալ են. յայնժամ ծերունի քահանայն Տէր Գէորգ, որպէս ի հնումն առ Հեղեաւ, անկաւ ի վերայ երեսաց իւրոց դէմ սուրբ Աստուածածնի, ելայ դառն արտասուօք և ասաց. Տէ՛ր Աստուած բազմագութ, և ողորմած, որ առնես իրաւունս, հան արադահաս օգնութիւն ի նեղութեան մերում. այլ որպէս կարդեցեր զիս ի պաշտօն քահանայութեանս և եառուր ինձ ժամանակ մինչև ցայսօր պահել զիս ի թշնամեաց, սակայն թշնամիք մեր և սուրբ խաչի քո ընկրկեա՛ և մատնեա՛ զնոսա ի ձեռն խստասիրտ արանց, զի մի՛ լիցուք նախատինք և ծաղր թշնամեաց մերոց. բարեխօսութեամբ և ծաղր թշնամեաց մերոց. բարեխօսութեամբ մօր քո և կուսի տունս այս շինուած յաւիտեանական ի փառս քո յաղագս ազգս. և ասացեալ մեր զամէնն:

Մինչ որ քահանայքն և ժողովուրդքն ամենեքեան ժողովեցան ի դուռն եկեղեցուն, նոքա ևս յահաբեկ եղեալ, լային մեծ ժամս:

Այլ զգեստին տանելն այնչափ չէինք հոգալ, բայց զայն կուլայաք, որ Օսմանցոց իշխանութեանս չար գոլորութիւն մի կայր, որ զտանուտէրն կուբռնէին, թէ զգողն քո ցոյց տուր մեզ, որ մենք հախէն դամք: Իսկ ի ծագել արևուս ապաւինեցաք սուրբ Աստուածածնին, զընացաք միաբան ամենեքեան ի փաշան. և էր անուն փաշային Մուրթազայ, տեղեամբն գեղեցիկ և հապակաւն մինչակ, հասկացուցաք մի ըստ միոջէ: Յորժամ լուաւ գանգատն մեր, եհարց մեզ, թէ ի՞նչպէս կերպ մարդիկ էին. ասացինք թէ Տաճիկք էին ոգիք տան: Յայնժամ զրամաեցաւ և հրամայեաց գահճապետին իւրոյ և այլ մեծամեծացն զօրացն իւրոց շուտով ընթանալ զինի նոցա չորս կողմն նահանգիս, և ասաց թէ պարտիք գտանել զնոսա թէ ի լեռինս և թէ այլ գաւառս, ապա թէ ոչ զձեզ կոտորամահ կուտառնեմ փոխանակ նոցա. նաև ի մէջ քաղաքիս եւ ասատիկ հրաման արձակել զնոսա. իսկ մեք զուրբաթ գիշերն ամենայն հոկումն արարաք և աղաչակեցաք առ սուրբ Աստուածածնին և ի սուրբ Գրիգորն, առ մեզ օգնութիւն կոչելով: Յայնժամ ի ծագել արեգականն շաբաթ օրին եկին ձայն աւետեաց առ փաշայն թէ գողքն ամենեքեան ըմբռնեցին ոգիք եկեղեցոյն ի յերկիրն Կեղու ի գաւառն Լեկզի

ի գիւղն, որ կոչի Ղզըլճան, ձերբակալ արարին. և մեք լուեալ զայս ուրախացաք և գոհացաք զԱստուծոյ, որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ ՏԷր և աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա:

Իսկ ի յաւուր կիրակէին բերին զամենեսեան. և ետ բերել առաջի իւր երկոտասան ոգին. գէմ յանդիման գիւան արար նոցա, զի էր զլեռաւոր նոցա մեծ մարդ ծառայ թագաւորին. ունէր երեք գիւղ, որ մականուամբ Պարմաղսըզ կոչէին, և միւսն էր կարգացող մօլլայ Նազան անուն. եհարց ցնոսա փաշան, թէ զայս բանս դուք արարիք, ճշմարիտ ասացէք. զուք անուանի մարդիկ էք, թագաւորի անուն ձեր վերայ է. ետ ձեզ զմիշ չեմ ասեր. նորա ուրացան, թէ ընաւ խաղար չունիմք. յայնժամ մռմռեալ փաշան, ել ի պալատէն, եկն ի մէջ ամբոխին, հրամայեաց տանջել զնոսա առաջի իւր. ետ մերկացուցանել զամենեսեան. և ձգեցին քալփաթուն նախ մեծաւորին իւրեանց, զի էր յաղթանդամ և կորովի. և նա ոչ երկեաւ ընաւ և զճշմարիտն ոչ ասաց. և հրամայեաց բերել զնազանն. և յորժամ ոկսան տանջել, աղաղակեաց և ասէ. մի՛ տանջէք զիս, զճշմարիտն ասացից ձեզ: Եւ ոկսաւ մի ըստ միոջէ ասել զոր ինչ գողութիւն արարեալ էին, թէ այսով տան եկեղեցի կանէ, որ բացեալ եմք.

ահա ձեր եկեղեցւոյ ապրանքն, կէսն բերդի մէջն է և կէսն այս նեղ տեղոջ է. և միւս ընկերքն ասացին. Նապան մօլլան մեզ գիր եառուր թէ Հայի մալն և եկեղեցւոյ ապրանքն Թուրքին հալալ է. Նորա համար զայդ արարինք: Եւ յորժամ զայս խօսքն լուաւ, առաւել զայրացաւ փաշան, ուղարկեաց զօրք և զգողոց մինն հետ նոցա եղիր, որ գնացեալ ի Լակզի, բերին ըզգեսան. և ձայնեաց զքահանայքն ի դիւանն. և ետ բերել զանօթն ամենայն, յայսչափ Տաճկի յառջևն եբաց, որ հաղարք հաղարաց կային առաջի նորա. ասաց. Քաշի՛ՀՀ, ձեր խաչերն զօրաւորք էին, մէկ որ չկրեան, երկրորդ որ իմ անունն բարձրացուցին, որ այսչափ գող բռնեցի, ինձ աշխարհիս գանձն արժէ. արի՛ք ձեր ապրանքն առէք: Առաջ մատեաւ երեցփոխան Աբրահամն, երկիր եպագ փաշային, և էառ ըզգեսան ամենայն և բերաւ եկեղեցին. բայց մէկ խաչ և մէկ աւետարան կորեաւ:

Արդ երբև եղև օրն չորեքշաբթի Մուրթազայ փաշան ետ զգողերն ի մունետիկն, թէ ընդառաջ նոցա քարոզեա՛ թէ Ով որ եկեղեցի բանայ, հալն այս է. ամեն դուռան երկու երկու գող ցցեաց. բայց զՊաբմազսըզն և մօլլայ Նապանն ի Կանայ դուռն յանդիման եկեղեցւոյն ի ցից եհան. ապա Նապանն յուշ ատատիկեցաւ.

մինչև երեկոյն զրուց ետուր, սուրբ Աստուածածնայ հրաշքն պատմեաց, թէ յորժամ մտաք ի դուռն տաճարին, ահ ու դողումն կալաւ զմեզ, այնպէս ուշաթափեցանք, որ թուէր թէ բիւրք բիւրուց հրեշտակաց պատեցին զմեզ, և յորժամ ելաք ի լեառն, այլ ոչ կարացաք գնալ այնպէս թէ ոտք մեր կապեալ էին. կրկին դարձաք ի գիւղն մեր, որ եկեալ ըմբռնեցին զմեզ. այս տասներկու գողացն վեցն ցից եհան, և զվեցին յաջոյ ձեռն կտրեաց, տասներկուքն այլ չարաչար ոտատակեցան և եղէն որպէս զաղբ երկրի: Այս բան արաւ, մէկ ոտակ չէառ փաշան, այնպէս Աստուած քաղցրացոյց զսիրտ փաշային, որ շատ մեծամեծ Տաճկներ գիլակ արարին փաշային, թէ Հայի եկեղեցոյ համար այսչափ Թուրք մի՛ ջարդեր, բնաւ ոչ ողորսեցաւ:

Եղբա՛յրք, մեծ հրաշք ու զարմանք է այս լսողաց, որ երեք չորս աւուր մէջն այսչափ բան եղաւ. բայց Հայոց եղջիւրն բարձրացաւ, ուրախութիւն անասելի և անպատմելի եղև, որ թէ քրիստոնեայ լինէր խշանն, այնպիսի կրօն չէր անէր: Եւ էաք յայնժամ մեաբան եղբայրք այս եկեղեցին քահանայք տան և հինգ, սարկաւագունս տան. այնպէս հաստատուն էր ժամակարգութիւնն, որ երկու դասով կու

երգէաք զամենայն շարաւանս և զայլ ամենայն տուն առ տուն. և այնպէս սէր ու միաբանութիւն էաք, որ կռիւ մի չիայր կամ նոսխանձ մեր մէջն. կարդացողութեամբ մէկ քան զմէկ ճարտարք, ամենեքեան որբութեամբ սնեալք և պատարագողք, պարկեշտ վարուք. թէպէտ ասելս յանդգնութիւն է և իմատոնոց պարսաւելի, բայց արժան համարեցաք գրել ըստ հրամանի Փրկչին, որ ասէ. Ոչ կարէ քաղաք թաքչել, որ ի վերայ լերինն կայցէ: Բայց ի մէջ եղբարցն քահանայական դասուցն ես միայն էի զատաճեալ մեղօք տէր Գէորգի որդի Յակոբս, որ դայս վերբերի պատմութիւնս արարեալ դրեցի և զղուշութիւն ապագայիցն եղբարցն մերոց: Ո՛վ Միածան Ս. Աստուածածնի՛ն, պարծանք քրիստոնէից և վահան քահանայից, զի դու հիմնարկեալ ես և օծեալ ի որբոց վարդապետացն մերոց Դաւթայ, որ Անյաղթն է կոչեցեալ և Մովսէսի Քերթողն, զի դու մօր դաւթունիս, որ միշտ բարեխօս ես քրիստոնէից, լե՛ր բարեխօս տառապեալ ազգիս Հայոց Արզրումայ քաղաքիս, ամէն:

Այս եղև ի թուականութեանն մերում ՌՃԲ. ի ժամանակս հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Փիլիպպոսի երկրս երանելւոյ

կաթուղիկոսին և առաջնորդութեան Կարնոյ քաղաքիս Սարգիս վարդապետին, որ բազում շինուածով զարդարեաց զվանքս մեր. զարդարեսցէ Տէր Աստուած զհոգի նորա երկնային լուսովն, ամէն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մեր սեփական մատենադարանի կորբատեան մատնուած ձեռագրերներից մէկին էր «Վարք Ս. Յովհաննու Ոսկեբերանի». նորա վերջում այլ գրչով կցուած էր սոյն նկարագիրը, որ բառացի արտագրել ենք՝ բացառութեամբ մի քանի երեսների, որոնք երբեւ շատ ծանօթ նիւթի կրկնութիւն այն ժամանակ բաց թողինք: Վերնագիրը «Բանս է զՎերին Հայոց ի Ցակոբ երկցուէ» կցուած էր անմիջապէս վերջին յիշատակարանին, որը գրել էր 1438 թուին Աւգոստոս աբեղայն. գրչութիւնների տարբերութիւնը ցոյց է տալիս, որ այլ ոմն է գրել այդ շարայարութիւնը, որը նիւթով էլ տարբեր է:

2. Վերին Հայք ասելով տէր Ցակոբն աչքի առաջ ունի Մեծ Հայքի 15 աշխարհներից առաջինը, որ է Բարձր Հայք. Մով. Խորենացու անունով պահուած աշխարհագրութեան մէջ ասուած է. «Բարձր ոչ միայն քան զՀայք, այլ և քան զամենայն երկիր. վասն որոյ Կատաբ երկրի կոչեցին զնա,» այդ երկիրը ծովի մակերեւոյթից բարձր է 5750—6050 և հին ժամանակ ունէր 9 գաւառ, այն է Գարանաղի, Աղիւն (Առիւծ), Մզուր (Մնձուր, Մձուր, Մծուր), Եկեղեց (Եկեղեաց), Մանանաղի, Դերջան, Սպեր, Շաղդամբ (Շաղատամբ, Շատդոմբ) և Կարին. «Բղխէ չորս գետս զօրեղս՝ զԵփրատ յարեւմուտս, և զԵրասխ յարեւելս, զԳայլ ի հարաւ, զԱկամսիս, որ է Վոհ (Ճորոխ) ի հիւսիս» (տ. Աշխարհացոյց Մ. Խոր. հրատ. Հ. Ա. Սիւքրի, Վենետիկ 1881, եր. 29):

3. Ս. Աթենադորոս կամ Թէոդորոս Սալհունի Հայոց քրիստոնէութեան առաջին նահատակներից մէկին է (տ. Ալիշան, Յուշիկք Հայրենեաց). նորա նահատակութեան տեղը մինչև այժմ ուխտատեղի է Համբարձման օրը և ռամկօրէն կոչւում է Սրբբելը Ս. Թորոս. այդ է Գոռորու վանքը, որտեղ կանգուն է մի նուիրական հին կաղնի. վանքի շրջակայքումն են Սուրբէնաշէն քաղաքի և Պարթենից դղեակի աւերակները:

4. Վարդանի աշխարհացոյցի մէջ ասուած է. «Անդ կայ Հաւահալանի թուրն Տրդատայ, զոր եհ նմա Կոստանդիանոս թագաւորն. և յորժամ խնդիր արար Տրդատ թագաւորն Լուսաւորչին և զնացեալ եգիտ ի լեառն Սեպուհ. և նա ասաց նմա զՆնջումն ազգին Աբշակու-

նեաց. և առեալ զթուրն օծեաց որպէս զկաչ և եհ ի յոգն բանիւն Աստուծոյ, և ասաց թէ յելանելն արիսկան ազգին որ են Փռանկք, եւ զեռ նշանս այս, զոր առեալ շրջեցուցանեն ընդ երեսս. և ինքն վերադարձեաւ առ Աստուած ... Յետոյ Պլուզ վարդապետն Յովհաննէս շրջեցաւ ի տեղիսն և եկ ի գլուխ լերինն, զոր այժմ Գոհանամբ ասեն Սեպուհոյ ծայրին, եւ տես զգալի աչօք զնշանն զայն և համբուրեաց և ասաց զԼուսաւորչին Անձինքն և զԼերինքն ի վերայ նորա եւայլն (տ. Աշխարհացոյց Վարդանայ վարդապետին, հրատ. Սէն Մարտէնի, Փարիզ 1879): Հաւհալի, այլ կերպ հաւատալոնի, հաւլունի թրի աւանդութիւնը կայ և այժմեան ժողովրդի մէջ (տ. Սրուանձտեան, Թորոս Աղբար):

5. Աղնցիք, թերևս նոյնն է ինչ որ հին Բարձր Հայքի Աղիւն (Առիւծ) գաւառի անունը (տ. Սիւրբի):

6. Գայլ գետոյ երկիր ըստ Սրուանձտեանի այժմ աղճատուած հնչմամբ ասւում է Գէլքիւտ (տ. Թորոս Աղբ.):

7. «Դրուց աշխարհ» կոչւում էր Վանանդու թագաւորութիւնը (տ. Մատթ. Ուռհայեցւոյ պատմ.). Դրունք և Դորունք անուանները միևնոյն տեղում ունին, անշուշտ, մի սերտ ա-

ռընչութիւն իրար հետ և կապուած են Դրուց կոչման հետ: Դրունք լեռների զարդն է համասփիւռ ծաղիկը, որ Դաւիթ Սալաձորեցին յիշում է ծաղիկների գովասանութեան մէջ (տես նոր ժողովածու, Բ. սրբակ, 17):

8. «Կերուածք և կեր» բառերը տարօրինակ դարձուածներ են, որոնցով որոշւում է Օսմանեան կուսակալի իշխանութեան և կարողութեան սահմանը: Տէր Յակոբի Նկարագրութիւնից երևում է, որ ժէ. դարում Օսմանեան վիշան անսահման իշխանութիւն ունէր և կուսակալութիւնը նորան յանձնուած էր ուտելու համար. այսպէս՝ կերուածք, կեր բառերը հոմանիշ են վիճակ և թեմ բառերին անհաշիւ օգտուելու իմաստով. «Արզրում նստող վիշային կերուածքն» «իշխող է սա մինչև ի Բալու Համթայ վիշային կերն, դէպի արևմուտք մինչ ի Թոխաթ և ի Սեբաստիոյ վիշային կերուածքն, և ի հիւսիսոյ կողմն մինչ ի Տրապիզոն և Անկիւսոյ վիշային կերուածն.» եւայլն:

9. Ռուս անունն Հայոց և Տաճիկ լեզուների ազդեցութեան տակ տէր Յակոբի հնչմամբ դառել է (Ու)ռուս, ինչպէս Հռոմ (բում կամ բումն) դառել է Ուռում. այդպէս է և արդի ժողովրդական արտասանութիւնն Ռուս անուանակայն անբացատրելի է մնում այն թէ ինչու-

մի քանի տեղեր (զոր օր. Աշտարխանում) այդ անուան մէջ մտել է տ հնչիւնը, Ռուտս, Ռուտցաց, Ռուտցի:

10. Թուն Վանատիկոյ է Վենետիկու հասարակապետութեան դահեկի պատուանունը դոժ (dux). Դաշանց թղթի մէջ դաւնիճա եղական ձևն է դուքս բառն, որից մակաբերելու է արական դաւն, դոճ:

11. Տէր Յակոբն իւր յիշատակարանում սովոր է առանձին տեսակ չափ դոյծ դնել, որ հասկանալի է միմիայն եկեղեցական մարդու: Արզրումի բերդի մեծութիւնը որոշելու համար նա ասում է «մեծութիւն նորա երկու կանոն սաղմոսու կուշջապատի.» (այլ տեղ մի «վառք սաղմոսի») այդ մի մօտաւոր չափ է. Արզրումի բերդի շրջագիծը այնքան է, որքան տևում է ութ կանոն սաղմոսներից երկուսի ասելը. ուրեմն, եթէ բերդի շրջապատի մի որոշ կէտից սկսելով սաղմոսը, շարունակ դնալու լինինք, մինչև կրկին նոյն տեղը դառնալներս կարող կը լինինք աւարտել երկու կանոն սաղմոս:

12. Օսմանցւոց և Պարսից մէջ տեղի ունեցած այս գինուորական պայքարը, որ երեսից երկու կողմի հայ և օտարազգի ընակիչներին ծանր նեղութիւններ կրեցին, տևեց 1586 թուից մինչև 1640 թ, երբ երևանամեայ գինադադար

հաստատուեցաւ. այդ ժամանակամիջոցի եղելութիւնները մանրամասն նկարագրել է իւր պատմութեան մէջ Առաքել վ. Դաւրիժեցին, որ ժամանակակից է տէր Յակոբին:

13. Գոհանամ լեառն, որ յիշուած է Շողալարի հետ, տարբեր է Սեպուհի գագաթից, որ ընկնում է դէպի արևմուտք Երզնկայի մօտ և որի վերայ է Ս. Լուսաւորչի ճգնարանն Մանեայ Աւյրը:

14. Արզրումի մօտ նշանաւոր հայաբնակ գիւղերից մէկն է Կան, որի մօտն է Մուտուրկայ վանքը (ըստ տէր Յակոբի Մուտուռկու). վանքի և գիւղի յարաբերութիւններից կազմուել է ժողովրդական առածը, որ Արզրումից տարածուել է և ուրիշ տեղեր, «Կան կընստի, Մուտուրկան կըհաչէ:»

15. Անշուշտ խօսքը Ծաղիէ (Ծաղիեայ) տարի մասին է, որ է Աւլադաղ, ըստ տէր Յակոբի Ծաղկաւէտ լեառն:

16. Սոյ կաթուղիկոսն Յովհաննէս Թլկուրանցի (1485 — 1525 թ.) բացի իւր տաղերից պատանաւոր է դարձուցել Արարատոց գիրքը, որի մասին է և տէր Յակոբի խօսքը (տ. Յովհ. Թլկ. և իւր տաղերը, Թիֆլիս 1892):

17. Տ. Փիլիպպոս կաթուղիկոսի ուղևորութիւնը տեղի ունեցաւ 1651—1653 թուին, երբ

նա ս. Էջմիածնից անցաւ Արզրում և ս. Երուսաղէմ, և Կ. Պոլսի վերայով դարձաւ իւր աթոռը:

18. Բինգեօլ կամ Հաղբ Ակունք ըստ տէր Յակոբի, և ըստ արդի գործածութեան Բիւրակն կամ Բիւրակնեան լեռներ, Բարձր Հայոց գեղեցիկ մասերից մէկն է. այդ սարերի մէջ է Սըրմանց կամ Սեբմանց (հին Աւոս, Արոս) գաղաթը, որ ունի 10500' բարձրութիւն: Այդ լեռները սիրելի են խաշնարած ժողովրդին և հարուստ նիւթ են տուել բանաստեղծութեանը (տ. Սրուանձտեանի «Համով Հոտով», և «Գրոց Բրոց»: տ. նաև Բինգեօլի կոչուած ժողովրդական երգերն Հայոց աշուղների բերանում մեծ մասամբ թուրքերէն լեզուով):



ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբրահամ 58.
Աղբակ 17, 51.
Զալա 28.
Զատմայրի 19.
Ս. Աթենագորաս 11, 63.
Լանաց դուռն 19.
Լաշիերա 21, 25, 46, 48.
Խլցկաց 25, 28.
Խորան 50.
Կամսխ 63.
Կին 14, 48.
Ղճաղալա
Ղնցիք 14, 64.
Ղլուն 63, 64.
Միթ 25, 49.
Յարարատեան 50.
Անի 22, 33, 50.
Անկեղտուն 22.
Աշխարհ 14.
Աշխէն 12.
Ապահունեաց 23.
Ապահէրդու ձոր 48.
Ռիւծ 63, 64.
Ռնտուա 27, 28, 32.
Սորեստան 29.
Սորոց երկ. 49.
Սատապատ 50.
Ս. Սատուածածնի վ. 10, 20.
50. Արազ 19, 20, 24, 50.
Արապ 49.
Արապկստան 28.
Արապկեր 14, 48.
Արգվին 51.
Ս. Արխատակէս 11.
Արծիկ 23.

Արծրունեաց 22.
Արմտանեբ 14.
Արշակ 43.
Արտաշ 49.
Աւագ վանք 13.
Աւգոէնա 62.
Աւետեաց խաչ 46, 47.

Բաբելոն 49.
Բաբերդ 15, 51.
Բաղատրեմ 11, 47.
Բալու 10, 25, 48.
Բաղդատ 28, 32, 49.
Բամբակաձոր 33.
Բասեն 18, 19, 20, 24, 50.
Բասրայ 49.
Բասրայ Բանտարբ 28.
Բինգեօլ 24, 50.
Բիւզանդիա 31.
Բորտուկ 48.

Գաղատաստիճ 47.
Գայլգ. 14, 52, 63.
Գառնիկ 20.
Գէորգ 55, 60.
Գինձ 24.
Գլակայ վ. 24.
Գնջան 25.
Գոմանամ լ. 13.
Գոռորու վ. 63.
Ս. Գրիգոր Լուսաւորչի 11, 12, 13, 20, 43, 48, 54, 63, 64.

Դարանաղեաց 12.
Դարբանա 50.
Ս. Դաւիթ եկ. 11.
Դաւիթ Անյաղթ 9, 60.
Դերջան 10, 44, 47.
Դիատին 21, 48.
Դկլատ 49.
Դորոնք 19, 64.
Դուին 50.
Դրունք 20, 64.

Եման 28.
Եգիպտոս 28.
Եղնկայ 11, 12, 47.
Եզը կամ. 22.
Եկեղեաց գ. 16, 63.
Երասխ տ. Արաղ.
Երևան 22, 28, 33, 34, 50.
Երիզատ 11, 12, 21, 23, 46, 47, 49, 53, 63.

Զարափխանա 20.
Զիւին 20.
Զուռնայ քերդ 49.

Էջմիածին 44, 60.

Ըսպեր տ. Սպեր.

Ս. Թադէոս առ. 13.
Թաթարիստան 28.
Թարգման 20.
Թարվէզ 34.
Թաքման 24, 50.
Թէոդոս 9, 44.
Թէոդուպոլիս 9, 43.
Թլիուրանցի 46.
Թոխաթ 25, 35.
Թորդան 13, 20.
Թորթում 17, 51.
Ս. Թորոս Սբբբլիզ 63.
Թոն գ. 28.
Թոնուս 28.

Ինշեան 17, 51.
Ինշանանիստ ձոր 17.

Լակզի 9, 24, 47, 56, 58.
Լեհ 28.
Ս. Լուսաւորչի վ. 42.
Լոռի 33.

Ս. Խաչ 10.
Խալի եաղի 21.
Խախու գ. 17.
Խախտիք 15.
Խամուր 21.
Խաչատուր Կեչառեցի 20.
Խաչափայտի լ. 47.
Խարբերդ 48.
Խլաթ 23.
Խնուս 23, 33, 48.
Խոյ 23.
Խոսրովիգուխտ 12.
Խոսրով փաշայ 32.
Խոտեջուր գ. 16.

Խորանաս 20.
Խորձունեաց ձոր 10, 47.
Խորվիրապ 11.

Ծաղկաւէտ լ. 46.
Ծանախ 15,
Ծիրանայ ձոր 47.

Կաղզուան 20, 25, 50, 54.
Կամախ 14, 42.
Կան 58.
Կասբիական ծով 19.
Ս. Կարապետ վ. 10, 11, 12, 22, 40.
Կարին 44, 46, 47, 53, 61, 63.
Կարմիր վ. 45.
Կարմրի 14, 32.
Կարս 21, 25, 33, 50, 54.
Կաֆայ 28.
Կեղի 16, 24, 25, 47, 56.
Կեռարիա 43.
Կէչէվան 20.
Կիլան 12.
Կիրակոս 12, 45.
Կիւմուշխանայ 15.
Կլայ 48.
Կոթեր 47.
Կողոնիայ 12.
Կովկաս 19.
Կուկիվանց 14, 15.
Կուր 50.
Կրիտէս 27.

Հադարացիք 18, 28.
Հաղբատ Անկունք 50.
Համամիլուռ ծ. 20.
Համբիթ տ. Ամբիթ.
Հայք, Վերին 9, 62.
Հանդուռուն 10.
Հաշտէն 49.
Հապաշոտան 28.
Հասանովայ 14.
Հասան Դալա 19.
Հաւատալի թուր 13, 63, 64.
Հիլլայ 49.
Հնդկաց ծ. 28, 49.
Հնձուց վ. 43, 47.
Ս. Հռիփսիմեանք 45.

Ղազար եպ. 42.
Ղարա եաղի 21.
Ղարայսար տ. Կեսարիա:
Ղզլպաշ 33.
Ղզլճան 10, 57.
Ղուռուչայ 14.

Ճրագ գ. 47.
Ճինիշ 47.
Ճորոխ 15, 31, 63.

Մագիստրոս 20.
Մալաթիա 48.
Մակու 22.
Մահմէտ 18, 52, 54.
Մաղաքիա 53.
Մաճարք 28.
Մամբրան 18.
Մանազկերտ 22, 48.
Մանանաղի 63.
Մանդակունիք 24.
Ս. Մանի կոյս 13.
Մասիս լ. 21, 22, 50.
Մատաբայ 51.
Մատինա 28.
Մաքա 28.
Ս. Մեսրոպ 9.
Մզուր 63.
Մէժէնկերտ 20.
Միաբան ս. Աստուածածին եկ. 51, 60.
Մինաս Բացախ 12.
Միջագետք 49.
Մոկք 28.
Մովսէս Խոր. 9, 43, 46, 60, 62.
Մովսէս Գ. կաթ. 34.
Մուխայ 28.
Մուշ 25, 33.
Մուսուլ 49.
Մուստաֆայ 32, 33.
Մուտուռկու 42.
Մուրատ 23, 32, 48.
Մուրատ Դալասի 52.
Մուրթազայ 56, 58.

Յակոբ 9, 60, 62.
Յասպաղա 22.
Յաւնիկ 22.
Յոհան Օձնեցի 22.
Յովհաննուվանք 16, 51.

Յովհան Ոսկեբերան 62.
Յովհ. Պլուզ 13, 64.

Ղեւոնդ Մեծն 11, 43.
Ղեվոնդ 14, 52.

Շահրազուլ 29.
Շաղգամք 63.
Շամախի 50.
Շամատուն 28.
Շապան 57, 58.
Շատ 49.
Շեղ Ղազարհատ 12.
Շէռիյան 14.
Շերակիան 28.
Շերվան 50.
Շոգենու ձոր 47.
Շուղալաբ 50.

Ոզկ 12.
Ոզկան 48.
Ս. Ոսկեանք 46.
Ովաճուզ 47.
Ովկիանոս 49.
Ուլէթ 18.
Ուռուս 27.

Զարբհոր 23.
Զարտախլու լ. 12.
Զլոր 28.
Զմշկայ գլ. 48.
Զոզանի կամուրջ 50.
Զորմարի 51.
Զօրս 33.

Պաղատատ տ. Բաղդատ.
Պայազիտ 21.
Պաշխազուլն 28.
Պարթենից գզ. 63.
Պարմազոզ 56, 58.
Պարտէզ 31. (11.
Պղնձազոյն անապատ
Պոնտոս 15, 22.

Ջաղայիս 28.
Ջաֆար 18.
Ջերմուկ 47.
Ջուլամերկ 28.
Ջուղայ 50.

Ս. Դահակ 9.
Սալհունկ 63.

Սալմաստ 28.
Սանոս Զէլէպի 28, 32, 34.
Սառչամ 47.
Սարգիս վ. 42, 61.
Ս. Սարգիս եկ. 18.
Սեբաստիա 14, 25, 35.
Ս. Սեբի 23.
Սեպուհ 13, 63, 64.
Ս. Սերովբէից վ. 14.
Սև ծով 15, 16, 22, 37, 52.
Ս. Սոփի 17.
Սուկաւէտ լ. 21.
Սուրբէնաշէն 63.
Սուրբիասեանք 21, 46.
Սպեր 16, 51, 63.
Սպիտակ ծով 49.
Տատմպօլ 13, 17, 18, 26, 28, 32, 33, 34, 47, 54.
Տօղանլու 21.

Վաղարշակերտ 21.
Վանայ ծ. 25, 28, 33.
Վանատիկ 27.
Վանի 35.
Վարդոյ գլ. 23.
Վարդապարիկ 22, 53.
Վիշապաձոր 50.
Վոհ 63.
Վրաստանպօղազ 46.
Վրաստան 28, 41.

Տարօն 13, 15, 48.
Տիգրիս 49.
Տիւրկէ 14.
Տղայ Լուսաւորիչ 11.
Տրապիզոն 25.
Տրդատ 11, 12, 13, 32, 63.

Փանակ 51.
Փիլիպպոս կաթ. 43, 46, 60.

Քէլքիւտ 64.

Քրդստան 29, 49.

Քօսատաղ 21.

Օխտիք 19, 51.

Ֆռանկ 27, 64.
Ֆրատ 48.

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց
Վիէննայ 1877.
. Գիրք առաջին՝ գրաբար բնագիրը.
Գիրք երկրորդ՝ աշխարհաբար թարգ
մանութիւնը (Բ. տպ. Թիֆլ. 1894
. Գիրք երրորդ՝ ծանօթութիւններ.
Հայոց հեթանոսական կրօնը, Վ.դրշպտ. 1879.
Ստեփաննոս Օրպէլեան, Ողբ և ս. Կաթուղիկէ
Թիֆլիս 1885.
Հայոց վանքերը, Մոսկով 1886.
Թովմայ Մեծոփեցու Ցիշատակարանը, Թիֆլ. 189
Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը, Թիֆ. 18
Նոր ժողովածու, Միջնադարեան Հայոց տաղ
ասանաւորներ.
Ա. պրակ, Թիֆլիս, 1892.
Բ. պրակ, Թիֆլիս, 1892.
Գ. պրակ, Թիֆլիս, 1896.
Համամ Արեւելցի, Վ.դաղաբշապատ 1896.
Ա. Լուսաւորչի աջը, Վ.դաղաբշապատ 1896.
Տ. Գեորգ Ա. Դեսդարձ, Վ.դաղաբշապատ 189
Գրիգորիս Ապրամարցին եւ իւր տաղերը, Թիֆ. 1
Մկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը, Վ.դրշպտ. 189

ԴՐԱՄԱԳՐՔԵՐ

Դրաբարի խոնարհումը, Թիֆլիս 1881.
Դրաբարի հոլովումը, Թիֆլիս 1881.
Մաղկասաղ արձակ եւ չափածոյ բանից,
շրջանս, Թիֆլիս 1881.
Մաղկասաղ Ա. շրջան (Գ. տպագր.) Թիֆլ.
Մաղկասաղ Բ. շրջան (Բ. տպագր.) Թիֆլ.
Բառացուցակ Ա.ֆ մաղկաբաղի համար, Թիֆլ.
Նախաբաւիղ (Բ. տպագր.) Թիֆլիս 1893.

Գրադարան 1911